

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

<<Ա.Ա.Բ ՊՐՈՆԵԿՏ>>

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՍԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Երեւան, Արաբկիր, Գեղորգ Վարդանյան փ., 1Ա, 0037

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԱՍՈՒՄԻ ԲԱԶԱՆՏԵՐԻ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ «ԱՐՄԵՆԻՈՒՍ-2»
ՏԵՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ 2024-2026թթ. ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՆԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԸՆԴԵՐՔԻ ԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԾՐԱԳԻ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ (ՇՄԱԳ)

(Լրամշակված)

«Ա.Ա.Բ ՊՐՈՆԵԿՏ» ՍՊԸ Տնօրեն՝



Ա.Բաղայան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ.....	4
1 ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ	7
1.1 Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը.....	7
1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը	7
2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ.....	11
2.1. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նկարագիրը	11
2.2. Նախագծման իրավական հիմքը	18
3.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ	23
3.1. Շրջակա միջավայրի էլակետային վիճակի գնահատման նպատակով օգտագործված էլակետային տվյալների աղբյուրները, հավաքագրման և ուսումնասիրությունների իրականացման մեթոդները	23
3.2. Տեղադիրքը.....	23
3.3. Ռելիեֆը, երկրաձևաբանությունը	27
3.4. Մեյամիկ կառուցվածք, արտածին երկրաբանական երևույթներ	34
3.5. Կլիմայական պայմաններ.....	36
3.6. Մթնոլորտային օդ	38
3.7. Ջրային ռեսուրսներ	39
3.8. Հողային ռեսուրսներ.....	43
3.9. Բուսական և կենդանական աշխարհ	45
3.10. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ	48
3.11.Անտառային ռեսուրսներ	49
3.12. Բնության հուշարձաններ	50
4.ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ	53
4.1. Ենթակառուցվածքներ	53
4.2.Հողերի տնտեսական յուրացման բնութագիրը	60
4.3.Պատմության և մշակութային հուշարձանները.....	61
4.4 Տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ	63
5.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՎՈՂ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ	64

6.ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ.....	75
6.1. Նախատեսվող հիմնական միջոցառումները.....	75
6.2. Մոցիալական ազդեցություն	78
6.3. Արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների ծրագրեր	79
7.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ.....	82
8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	86
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	88

ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Ներկայացվող սահմանումները և եզրույթները /տերմիններ/ բերվում են ՀՀ բնապահպանական ոլորտի օրենքներից և նորմատիվ փաստաթղթերից:

Շրջակա միջավայր՝ բնական և մարդածին տարրերի (մթնոլորտային օդ, ջրեր, հողեր, ընդերք, լանդշաֆտ, կենդանական ու բուսական աշխարհ, ներառյալ՝ անտառ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, բնակավայրերի կանաչ տարածքներ, կառույցներ, պատմության և մշակույթի հուշարձաններ) և սոցիալական միջավայրի (մարդու առողջության և անվտանգության), գործունեների, նյութերի, երեւոյթների ու գործընթացների ամբողջությունը և դրանց փոխազդեցությունը միմյանց ու մարդկանց միջև:

շրջակա միջավայրի վրա ազդեցություն՝ հիմնադրությամբ փաստաթղթի գործողության կամ նախատեսվող գործունեության իրականացման հետեւանքով շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա հնարավոր փոփոխությունները:

նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում:

նախաձեռնող՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն՝ հիմնադրությամբ փաստաթղթի նախագիծ ներկայացնող պետական կամ տեղական ինքնակառավարման մարմին կամ նախատեսվող գործունեություն իրականացնելու համար դիմող անձ:

ազդակիր համայնք՝ շրջակա միջավայրի վրա հիմնադրությամբ փաստաթղթի կամ նախատեսվող գործունեության հնարավոր ազդեցության ենթակա համայնքի (համայնքների) բնակչություն՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձինք:

շահագրգիռ հանրություն՝ փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթի ընդունման և (կամ) նախատեսվող գործունեության իրականացման առնչությամբ հետաքրքրություն ցուցաբերող իրավաբանական և ֆիզիկական անձինք:

գործընթացի մասնակիցներ՝ պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմիններ, ֆիզիկական ու իրավաբանական անձինք, ներառյալ՝ ազդակիր համայնք, շահագրգիռ հանրություն, որոնք, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի համաձայն, մասնակցում են գնահատումների և (կամ) փորձաքննության գործընթացին:

հայտ՝ նախաձեռնողի կամ նրա պատվերով կազմած հիմնադրությամբ փաստաթղթի մշակման և (կամ) նախատեսվող գործունեության նախաձեռնության մասին ծանուցման փաթեթ:

բնության հատուկ պահպանվող տարածք՝ ցամաքի (ներառյալ՝ մակերևութային ու ստորերկրյա ջրերը և ընդերքը) և համապատասխան օդային ավազանի՝ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով գիտական, կրթական, առողջարարական, պատմամշակութային, ռեկրեացիոն, զբոսաշրջության, գեղագիտական արժեք են ներկայացնում, և որոնց համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկ՝ բնապահպանական, գիտական, պատմամշակութային, գեղագիտական, ռեկրեացիոն արժեքներ ներկայացնող միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որը բնական լանդշաֆտների ու մշակութային արժեքների զուգորդման շնորհիվ կարող է օգտագործվել գիտական, կրթական, ռեկրեացիոն, մշակութային և տնտեսական նպատակներով, և որի համար սահմանված է պահպանության հատուկ ռեժիմ:

ազգային պարկի արգելոցային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելոցի համար օրենքով սահմանված ռեժիմը:

ազգային պարկի արգելավայրային գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ գործում է պետական արգելավայրի համար օրենքով սահմանված ռեժիմը.

ազգային պարկի ռեկրեացիոն գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է քաղաքացիների հանգստի և զբոսաշրջության ու դրա հետ կապված սպասարկման ծառայության կազմակերպումը.

ազգային պարկի տնտեսական գոտի՝ ազգային պարկի տարածքից առանձնացված տեղամաս, որտեղ թույլատրվում է ազգային պարկի ռեժիմին համապատասխանող տնտեսական գործունեություն.

պետական արգելավայր՝ գիտական, կրթական, պատմամշակութային, տնտեսական արժեք ներկայացնող տարածք, որտեղ ապահովվում են էկոհամակարգերի և դրանց բաղադրիչների պահպանությունը և բնական վերարտադրությունը.

պետական արգելոց՝ գիտական, կրթական, պատմամշակութային արժեք ներկայացնող առանձնահատուկ բնապահպանական, գեղագիտական հատկանիշներով օժտված միջազգային և (կամ) հանրապետական նշանակություն ունեցող տարածք, որտեղ բնական միջավայրի զարգացման գործընթացներն ընթանում են առանց մարդու անմիջական միջամտության.

բնության հատուկ պահպանվող տարածքի պահպանման գոտի՝ տարածք, որի ստեղծման նպատակն է սահմանափակել (մեղմացնել) բացասական մարդածին ներգործությունը բնության հատուկ պահպանվող տարածքների էկոհամակարգերի, կենդանական ու բուսական աշխարհի ներկայացուցիչների, գիտական կամ պատմամշակութային արժեք ունեցող օբյեկտների վրա.

լանդշաֆտ՝ աշխարհագրական թաղանթի համասեռ տեղամաս, որը հարևան տարածքներից տարբերվում է երկրաբանական կառուցվածքի, ռելիեֆի, կլիմայի, հողաբուսական ծածկույթի և կենդանական աշխարհի ամբողջությամբ.

հող՝ երկրի մակերևույթում բիոտիկ, աբիոտիկ և մարդածին գործոնների երկարատև ազդեցության արդյունքում առաջացած ինքնուրույն բնագիտապատմական հանքաօրգանական բնական մարմին՝ կազմված կոշտ հանքային և օրգանական մասնիկներից, ջրից ու օդից և ունի բույսերի աճի ու զարգացման համար համապատասխան պայմաններ ստեղծող յուրահատուկ գենետիկամորֆոլոգիական հատկանիշներ ու հատկություններ.

խախտված հողեր՝ առաջնային տնտեսական արժեքը կորցրած և շրջակա միջավայրի վրա բացասական ներգործության աղբյուր հանդիսացող հողեր.

հողի բերրի շերտ՝ հողային ծածկույթի վերին շերտի բուսահող, որն օգտագործվում է հողերի բարելավման, կանաչապատման, ռեկուլտիվացման նպատակներով.

հողի բերրի և հնարավոր բերրի շերտի հանման նորմը (Ն)՝ արտահայտված խոր. մետրով.

ռեկուլտիվացում՝ խախտված հողերի վերականգնմանն ուղղված (օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումների համալիր, որը կատարվում է 2 փուլով՝ տեխնիկական և կենսաբանական.

ռեկուլտիվացիոն աշխատանքներ՝ օգտակար հանածոների արդյունահանման նախագծով կամ օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրով շրջակա միջավայրի պահպանության նպատակով նախատեսված ընդերքօգտագործման արդյունքում խախտված հողերի վերականգնմանն ուղղված (անվտանգ կամ օգտագործման համար պիտանի վիճակի բերելու) միջոցառումներ.

կենսաբանական բազմազանություն՝ ցամաքային, օդային և ջրային էկոհամակարգերի բաղադրիչներ համարվող կենդանի օրգանիզմների տարատեսակություն, որը ներառում է բազմազանությունը տեսակի շրջանակներում, տեսակների միջև և էկոհամակարգերի բազմազանությունը.

Երկրաբանական ուսումնասիրություններ՝ ընդերքի երկրաբանական աշխատանքների համալիր, որի նպատակն է ուսումնասիրել երկրակեղևի կառուցվածքը, ապարների առաջացման պայմանները, արտածին երկրաբանական պրոցեսները, հրաբխային գործունեությունը, ինչպես նաև հայտնաբերել ու գնահատել օգտակար հանածոների պաշարները:

Բնապահպանական կառավարման պլան՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր դրական ազդեցությունների պահպանման և ուժեղացման, բացասական ազդեցությունների կանխարգելման, բացառման, նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և շրջակա միջավայրին հասցվող վնասի հատուցման համար նախատեսվող միջոցառումները (շինարարության, շահագործման, փակման, հետփակման փուլերը, ռիսկային և արտակարգ իրավիճակները), դրանց ընտրության և արդյունավետության հիմնավորումը, իրականացման ժամանակացույցը, մշտադիտարկման ցուցիչները, ծախսերի գումարային գնահատումը նախատեսող փաստաթուղթ:

Բնության հուշարձան, բնության հատուկ պահպանվող տարածքի կարգավիճակ ունեցող գիտական, պատմամշակութային և գեղագիտական հատուկ արժեք ներկայացնող երկրաբանական, ջրաերկրաբանական, ջրագրական, բնապատմական, կենսաբանական բնական օբյեկտ:

պատմության և մշակույթի անշարժ հուշարձան՝ պետական հաշվառման վերցված և հուշարձանի կարգավիճակ ունեցող պատմական կամ հնագիտական կամ ճարտարապետական կամ մոնումենտալ արվեստի կամ գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող հնագիտական շերտերը, քարեդարյան կայանները, քարայր-կացարանները, կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զբաղեցրած և պատմականորեն դրանց հետ կապված տարածքով, դրանց մաս կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, որմնանկարները, պատմամշակութային արգելոցները, պատմական լանդշաֆտները և հիշարժան վայրերը, պատմական բնակավայրերի քաղաքաշինական և պատմական կենտրոնները՝ անկախ պահպանվածության աստիճանից:

արտադրական լցակույտեր՝ օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման կամ վերամշակման արդյունքում առաջացած ընդերքօգտագործման թափոններ (այդ թվում՝ պոչանքներ)՝ տեղադրված երկրի մակերևույթի վրա կամ լեռնային փորվածքներում:

ջրապահպան անօտարելի գոտիների տարածքներ՝ տարածքներ, որտեղ ապահովվում են ջրամատակարարման, ջրահեռացման, ինչպես նաև հիդրոտեխնիկական կառուցվածքների շահագործումը, վերականգնումը և պահպանումը: Տարածքներն ընդգրկում են ջրամատակարարման, ջրահեռացման և հիդրոտեխնիկական կառուցվածքներին անմիջապես հարող տարածքները:

1. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

1.1 Նախաձեռնողի անվանումը և գտնվելու վայրը Նախաձեռնող՝ «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ

Գրանցման համար՝ 264.110.07448

Գրանցման օրը՝ 17.03.2006թ.

ՀՎՀՀ՝ 00250339

Գտնվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Գևորգ Վարդանյան փ., 1Ա (0037)

1.2. Նախատեսվող գործունեության անվանումը և նպատակը

ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Արմենիուս-2» տեղամասի սահմաններում 2024-2026թթ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման սույն հաշվետվությունը կազմվել է «Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ-ի կողմից:

Նախատեսվող գործունեությունն անվանվում է՝ «ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Արմենիուս-2» տեղամասի սահմաններում 2024-2026թթ. օգտակար հանածոների արդյունահանման նպատակով ընդերքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների կատարման ծրագիր»:

Նախատեսվում է բազալտներն ուսումնասիրել որպես շինարարական հումք՝ ըստ «Քարաբլոկներ բնական քարից՝ երեսապատման իրերի արտադրության համար» ԳՕՍՍ 9479-2014-ի տեխնիկական պայմանների և ՀՍՍ ԳՕՍՍ-8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջների:

Նախատեսվում է բազալտների տեղամասի մանրակրկիտ հետախուզում, հումքի որակական հատկությունների պարզաբանման և արդյունաբերական A կարգով պաշարների գնահատման և հաշվարկման նպատակով՝ «Շինարարական և երեսապատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման հրահանգի» պահանջների համաձայն:

Շրջակա միջավայրի վրա մարդկային գործունեության վնասակար ազդեցության կանխման, կենսոլորտի կայունության պահպանման, բնության և մարդու կենսագործունեության ներդաշնակության պահպանման համար կարևորագույն

նշանակություն ունի յուրաքանչյուր նախատեսվող ծրագրի կամ գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության ճշգրիտ և լիարժեք գնահատումը:

ՇՄԱԳ հաշվետվությամբ ներկայացվում է իրականացվելիք գործունեության շրջակա միջավայրի վրա ունենալիք ազդեցությունների գնահատականը, ինչպես նաև մշակվում են բոլոր այն միջոցառումները, որոնք հնարավորություն կտան մեղմելու ազդեցության չափը:

Հաշվետվությունը կազմելիս ուսումնասիրվել է միջազգային լավագույնը փորձը, օգտագործվել են բնապահպանական ուղեցույցների, ձեռնարկների ինչպես նաև մեթոդական ցուցումների դրույթներն ու կարգավորումները:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքին օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ ենթակետի՝ նախատեսվող գործունեությունը դասակարգվում է «Բ» կատեգորիայի, որի կազմի և բովանդակության պահանջները սահմանվում են նույն օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասով: Ներկայացված ՇՄԱԳ հաշվետվության կազմը և բովանդակությունը համապատասխանում է "Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին" ՀՀ օրենքին, ՀՀ Շրջակա միջավայրի նախարարի 25.10.2022թ. թիվ 369-Ն հրամանի հավելված 2-ի դրույթներին:

«Ա.Ա.Բ. ՊՐՈԵԿՏ» ՍՊԸ կողմից հայցվող տարածքը կազմում է մոտ 12.7հա: Տարածքը բաղկացած է մոտ 3 տասնյակ գյուղատնտեսական նշանակության հողամասերից, որոնցից մոտ 1.5 հեկտարը՝ համայնքային, 11.2 հեկտարը՝ մասնավոր սեփականության են՝ համաձայն կադաստրային տվյալների:

Ներկայացվող գնահատման հաշվետվությունում բերված են տեղամասի երկրաբանական ուսումնասիրության տեխնիկա-տեխնոլոգիական գործընթացների նկարագրությունը, դրանց ազդեցությունը շրջակա միջավայրի վրա, ինչպես նաև ազդեցության նվազեցման համար անհրաժեշտ միջոցառումների ցանկը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հիմնական նպատակն է՝ նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում ուղղակի և անուղղակի ազդեցության կանխորոշումը, նկարագրությունը և հիմք է հանդիսանում դրանց կանխարգելման կամ հնարավորին չափի նվազեցման պարտադիր միջոցառումների մշակման համար:

2.ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ

Հաստատված հիմնադրությային փաստաթղթերին նախագծային փաստաթղթով նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումները.

ՇՄԱԳ հաշվետվության մեջ բովանդակային կարևոր պահանջ է հանդիսանում հիմնադրությային փաստաթղթերին *(շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող փաստաթուղթ (ռազմավարություն, հայեցակարգ, բնական ռեսուրսների օգտագործման սխեմա, ծրագիր, պլան, հատակագիծ, քաղաքաշինական ծրագրային փաստաթուղթ) կամ փաստաթղթի փոփոխություն՝ հաստատված Հայաստանի Հանրապետության օրենքներով կամ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների այլ իրավական ակտերով) նախագծային փաստաթղթով (նախատեսվող գործունեության իրականացման համար օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված փաստաթուղթ կամ փաստաթղթերի փաթեթ և դրանց փոփոխություն...)* նախատեսվող գործունեության համապատասխանության հիմնավորումը:

ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի հիմնադրությային փաստաթուղթը՝ «ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԴԲԱՆԻՑ ԲԽՈՂ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԸ (ՄԻՆԶԵՎ 2035 ԹՎԱԿԱՆԸ) ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ», ընդունվել է 2023թ. մայիսի 11-ին ՀՀ Կառավարության կողմից թիվ 730-Լ Որոշմամբ:

Նախատեսվող սույն գործունեության համապատասխանությունը հիմնավորվում է նշված Որոշման Հավելված 1-ի 3-րդ գլխում ամփոփված՝ ՀՀ հանքարդյունաբերության ոլորտի ուժեղ և թույլ կողմերի վերլուծության մեջ: Նշվում է, որ *օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման նպատակով երկրաբանական ուսումնասիրության ծրագրերը ներկայումս իրականացվում են ոչ բավարար քանակով և, որ անհրաժեշտ է իրականացնել երկրաբանական նոր տվյալների հավաքագրման և դրանց հետագա կառավարման, օգտակար հանածոների նոր պաշարների հայտնաբերման աշխատանքներ...:* Նախատեսվող սույն գործունեությունը միտված է իր մասով լրացնելու ոլորտի զարգացման վերոնշյալ բաղադրիչը և լիովին համապատասխանում է ռազմավարության տրամաբանությանը:

Նախատեսված գործունեության թույլտվության ստացման պարագայում Ընկերության կողմից գործունեության իրականացման վերջնարդյունքն ամենայն հավանականությամբ լինելու է օգտակար հանածոի նոր պաշարների հաշվարկումն ու հաստատման ներկայացումը: Այս համատեքստում նշենք հիմնադրությային նշված փաստաթղթի կարևոր և առանցքային դրույթներից.

- հանքարդյունաբերությունն ունի բարձր տնտեսական բազմապատկիչ (մուլտիպլիկատոր): Վերը նշված ՀՆԱ բազմապատկիչի հիման վրա հաշվարկների իրականացման արդյունքում ստացվում է, որ հանքագործական արդյունաբերության և բացահանքերի շահագործման ոլորտի ընդհանուր ներդրումը ՀՀ ՀՆԱ-ի մեջ 2021 թ.-ի համար կազմում է 11%, որից մոտ 6%-ը բուն ոլորտի ուղղակի ներդրումն է, իսկ մոտ 5%-ը՝ անուղղակին: Տնտեսության այլ ճյուղերի համեմատ հանքարդյունաբերության բազմապատկիչը ամենաբարձրն է ողջ աշխարհում...

- Հայաստանի Հանրապետությունում ընդերքօգտագործման ոլորտի հիմնական ուղենիշն օգտակար հանածոների՝ տնտեսապես արդյունավետ, ողջամիտ և համալիր շահագործման, ինչպես նաև սերունդների հանդեպ պատասխանատվության (այդ թվում՝ բնապահպանական ռիսկերի կառավարման) նպատակների համակցմամբ գործուն համակարգի ապահովումն է: Այն թույլ կտա իրացնել երկրի բնական պաշարների ներուժը՝ առավելագույն սոցիալ-տնտեսական օգուտների ստացման, դրանց արդյունավետ բաշխման և երկարաժամկետ կայուն զարգացման ակնկալիքով:

Նախագծային փաստաթղթով նախատեսվող սույն գործունեությունը նախագծվել, մշակվել և համապատասխանում է հիմնադրությային փաստաթղթում ամրագրված հայեցակարգային դրույթներին, ըստ որոնց՝ ժամանակակից հանքարդյունաբերության ամենաբարձր ստանդարտները պահանջում են ընդհանուր հաշվեկշռում բացասական ազդեցության մեղմման ու դրական ազդեցություն թողնելու միջոցառումների ապահովում, ինչը հնարավոր է իրականացնել գործնականում: Ե՛վ բնապահպանական, և՛ սոցիալական ժամանակակից լավագույն չափանիշներին հետևող հանքարդյունաբերական նախագծերը հիմնված են այն սկզբունքի վրա, որ մեղմեն ցանկացած հասցված վնաս և ավելացնեն այլ վայրում կամ այլ միջոցով դրական ազդեցություն:

2.1.Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների նկարագիրը

ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների Արմենիուս-2 տեղամասի երկրաբանական ուսումնասիրման աշխատանքների ծրագիրը կազմված է «Օգտակար հանածոների պաշարների դասակարգման կիրառման հրահանգները սահմանելու մասին» ՀՀ ՏԿԵ նախարարի 11.08.2021թ. N06-Ն հրամանի հավելված N 2-ի՝ «Շինարարական և երեսպատման քարերի հանքավայրերի դասակարգման կիրառման հրահանգի» պահանջներին համապատասխան:

Հետախուզման մեթոդիկան ընտրելիս հաշվի են առնված օգտակար հանածոյի ձևաբանությունը, տեղադրումը, դիրքը, տեղամասի երկրաբանական կառուցվածքը, երկրաբանահետախուզական աշխատանքների կատարման լեռնատեխնիկական պայմանները, տեղամասի չափերը, ռելիեֆի ձևն ու մերկացվածության աստիճանը և այլն: Տեղամասի շրջակայքում հայտնի հորատանցքերի տվյալներով բազալտների հզորությունը սպասվում է 10-22մ սահմաններում, որի հատակում աստիճանաբար ի հայտ են գալիս խարամացված առաջացումներ: Երևակումը կարող է վերագրվել 1-ին խմբին, «1բ» ենթախմբին՝ հորիզոնական կամ սակավաթեք տեղադրմամբ շերտաձև մարմիններ՝ տեկտոնական գործընթացներով չխախտված կամ թույլ խախտված:

Համաձայն վերը նշված հրահանգի աղյուսակ 1-ով շինարարական և երեսպատման քարերի հանքավայրերի հետախուզման ժամանակ կիրառվող հետախուզական փորվածքների ցանցի խտությանը ներկայացվող պահանջների՝ փորվածքների միջև հեռավորությունն ըստ պաշարների կարգերի առաջարկվում է. A կարգի համար՝ 100-200մ, B կարգի համար՝ 200-300մ, C₁ կարգի համար՝ 300-400մ:

Նախատեսվում է բազալտների տեղամասի մանրակրկիտ հետախուզում, հումքի որակական հատկությունների պարզաբանման և արդյունաբերական A կարգով պաշարների գնահատման և հաշվարկման նպատակով՝ ելնելով տարածքի ձևից և չափերից:

Նախատեսվում է բազալտներն ուսումնասիրել որպես շինարարական հումք՝ ըստ «Քարաբլոկներ բնական քարից՝ երեսպատման իրերի արտադրության համար» ԳՕՍՏ 9479-2014-ի տեխնիկական պայմանների և ՀՍՏ ԳՕՍՏ-8267-95 «Խիճ և կոպիճ խիտ լեռնային ապարներից շինարարական աշխատանքների համար» տեխնիկական պահանջների:

Բազալտների տեղամասի երկրաբանական ուսումնասիրությունների աշխատանքները նախատեսվում է իրականացնել այունյակային հորատանցքերի անցման և նմուշարկման միջոցով:

Համաձայն վերը նշված հրահանգի՝ տեղամասի ուսումնասիրման հետախուզական ցանցը A կարգի պաշարների համար նախատեսվում է 100-200մ սահմաններում:

Հետախուզական հորատանցքերի անցում

Տեղամասի սահմաններում բազալտային հոսքերի հզորությունը, ըստ հարակից տարածքում փորված հորատանցքերի տվյալների, սպասվում է 10-22մ-ի սահմաններում և, այդ փաստը հաշվի առնելով, նախատեսվում է կատարել հորատման աշխատանքներ: Հորատումը պետք է կատարվի այունակային եղանակով՝ 112-93մ տրամագծով կարծր համաձուլվածքի կամ ալմաստե թագիկներով: Ընդամենը նախատեսվում է անցնել 25 հորատանցք՝ 11-25մ խորություններով, ընդհանուր 400զծ.մ. երկարությամբ:

Հորատումը կկատարվի ինքնագնաց հորատման հաստոցի միջոցով, որի տեղադրման համար ճանապարհներ և հարթակների կառուցում չի նախատեսվում:

Բոլոր տիպի աշխատանքները իրականացվելու են բնապահպանական նորմերի խստիվ պահպանմամբ: Հորատումը պետք է ապահովի հորատահանուկի բարձր էլք (95% և ավելին):

Հորատմանն անհրաժեշտ ջրամատակարարման կազմակերպումը կիրականացվի հորատման ծառայություն մատուցող ընկերության կողմից, ըստ անհրաժեշտության տարածք կբերվի բաքերով՝ ջրօգտագործման թույլտվություն ունեցող որևէ ընկերության միջոցով (Թեև «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊ Ընկերությունը ևս ունի ջրօգտագործման թույլտվություն, սակայն հորատման ծառայություն մատուցող ընկերությունն ինքն է որոշում և ազմակերպում իր ջրի մատակարարման ձևերն ու աղբյուրները): Աշխատանքների ընթացքում ջրային ավազանի աղտոտում չի սպասվում: Ջուրը կօգտագործվի շրջանառու փակ համակարգով՝ հորատանցքից դուրս եկող ջրի հոսքը կհավաքվի անմիջական կից պլաստմասե թասանման 2 տարաներում (առաջինում կատարվում է շլամի նստեցում, երկրորդից վերցվում է

պարզեցված ջուրը) և ապա նորից կմատակարարվի հորատահաստոցին: Առհասարակ վերոնշյալը, բնապահպանական և տնտեսական (առավելապես տնտեսման) նկատառումներից ելնելով, հորատման ժամանակ լայնորեն ընդունված և արդյունավետ կիրառվող մեթոդ է:

Փաստագրում

Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հորատանցքերը և փորձնական բացահանքը:

Երկրաբանական փաստագրման աշխատանքները նախատեսվում է կատարել 1:100 մասշտաբով: Այդ աշխատանքների ծավալները կկազմի՝ 400զծ.մ. հորատանցքերի փաստագրում:

Երկրաբանահանույթային աշխատանքներ

Տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական քարտեզի կազմման համար նախատեսվում է կատարել տեղամասի 1:1000 մասշտաբի երկրաբանական հանույթ մոտ 15 հա տարածքի վրա:

Նմուշարկում

Նմուշարկումն իրականացվելու է հորատահանուկից:

Օգտակար հանածոյի նյութական, հատիկային կազմը և տեխնոլոգիական հատկությունները որոշելու նպատակով նախատեսվում է.

- հանուկային նմուշների վերցնում –յուրաքանչյուր հորատանցքից 1-2 նմուշ, ընդամենը 32 նմուշ բազալտների բացված ամբողջ հզորությամբ: 1 նմուշի քաշը կկազմի 10-30կգ:

Նմուշների մշակում

Հումքի քիմիական կազմի ուսումնասիրման համար վերցված նմուշների մշակումը և կրճատումը նախատեսվում է $K=0.04$ մեծության օգտագործմամբ:

Վերցված նմուշների կրճատումը նախատեսվում է քառաբաժանմամբ:

Լաբորատոր ուսումնասիրություններ

Վերցված բոլոր 32 հանուկային նմուշները պետք է ենթարկվեն համապատասխան լաբորատոր ուսումնասիրությունների և փորձարկումների՝ ըստ համապատասխան ԴՕՇ-երի պահանջների, մասնավորապես՝ 32 նմուշի ֆիզիկամեխանիկական հատկությունների և 4 նմուշի քիմիական կազմի:

Նախատեսվում է 4 նմուշներով միներալային կազմի ուսումնասիրում և 5 նմուշով վերստուգիչ անալիզների իրականացում այլ լաբորատորիայում՝ տրամադրելով առաջնային նմուշի կրկնօրինակը: Ընդամենը, վերստուգիչ անալիզները հաշվի առնելով, կկատարվի 37 նմուշի ֆիզիկամեխանիկական հատկությունների ուսումնասիրում:

Փորձնական հանույթ

Տեղամասում 9479-2014 ԳՈՍՏ-ի պահանջները բավարարող բլոկների ելքի որոշման նպատակով նախատեսվում է կատարել փորձնական հանույթ մեկ փորձնական բացահանքի անցումով: Մոտ 40մ² մակերեսով (5մ x 8մ) բացահանքից հեռացված մինչև 2մ հզորության մակաբացման փուխր ապարների և մինչև 1 մ հզորության հողմահարման շերտի (ընդհանուր մոտ 3մ) ընդհանուր մոտ 120մ³ (40մ² x 3մ) զանգվածի հանումից հետո նախատեսվում է բազալտի 150մ³ թարմ զանգվածի արդյունահանում: Բացահանքի չափերը թարմ բազալտների հատվածում նախատեսվում են. խորությունը 4մ, երկարությունը՝ 7.5, լայնությունը 5մ: Արդյունքում կորոշվի բլոկների ելքը, այնուհետև փորձնական սղոցմամբ՝ երեսպատման սալերի ելքը բլոկներից:

Փորձնական հանույթի իրականացման բացահանքի տեղակայումը հնարավոր կլինի միայն երկրաբանական ուսումնասիրության որոշակի աշխատանքների կատարումից հետո՝ աշխատանքների վերջին փուլում:

Աշխատանքները կատարվելու են երկրաբանա-մարկշեյդերական վերահսկողությամբ: Բացահանքից կվերցվեն 5 մենաքարեր լաբորատոր փորձարկումների համար:

Փորվածքների լցում

Հայցվող տարածքի մակերեսի բուսահողային շերտը շատ փոքր հզորության է (մինչև 10սմ), որի ծավալը կարող է կազմել $40\text{մ}^2 \times 0.1\text{մ}=4\text{մ}^3$: Այս շերտը կհանվի և մակաբացման շերտից առանձին կտեղավորվի բացահանքի եզրին: Դա կօգտագործվի բացահանքի ռեկուլտիվացման համար:

Բացահանքից հեռացված մինչև 2մ հզորության մակաբացման փուխր ապարների և մինչև 1 մ հզորության հողմահարման շերտի (ընդհանուր մոտ 3մ) զանգվածը ենթակա է հետ վերադարձման արդյունահանված տարածք և պետք է կատարվի ամրացում-նստեցում: Բացահանքից ընդհանուր հեռացված և հետլցման ենթակա ապարների ծավալը կկազմի $3\text{մ} \times 40\text{մ}^2=120\text{մ}^3$ (այս ծախսերը հաշվառված են փորձնական հանույթի արժեքի մեջ):

Տոպոմարկշեղերական աշխատանքներ

Նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական հանույթ մոտ 15 հա ընդհանուր տարածքի վրա՝ հայցվող տարածքից դուրս չափագրման աշխատանքներ կատարելով նաև հարակից ձորակի տարածքներում՝ տարածքի ճշգրիտ տեղակայման նպատակով: Նախատեսվում է բոլոր հետախուզական փորվածքների գործիքային տեղադրում տոպոհիմքի վրա: Աշխատանքները կկատարվեն պայմանագրային հիմունքներով:

Ինժեներակրաբանական, լեռնատեխնիկական և ջրակրաբանական ուսումնասիրություններ

Տեղամասի ինժեներակրաբանական, լեռնատեխնիկական և ջրակրաբանական պայմանների ուսումնասիրման նպատակով նախատեսվում են համապատասխան դիտարկումներ հետախուզական փորվածքների անցման ընթացքում, ինչպես նաև տեղամասի հարևան տարածքների տեղագնում գեոդինամիկ երևույթների առկայության պարզաբանման նպատակով:

Ապարների ռադիոակտիվության որոշում

Նախագծով նախատեսված հիմնական աշխատանքներին զուգընթաց իրականացվելու է ապարների ռադիոակտիվության ուսումնասիրություններ:

Բոլոր լեռնային փորվածքները ենթարկվելու են γ -պրոֆիլացման: Դիտարկման կետերի ֆիքսումն իրականացվելու է համաձայն գործող նորմերի՝ հետախուզահորերում 2 կետ 1մ^2 վրա: Հորատանցքերում հնարավոր չէ իրականացնել նմանատիպ չափումներ, այն կկատարվի հանված զանգվածի վրա:

Աշխատանքները կատարվելու են սեփական ուժերով՝ СРП-68-01 ռադիոմետրով:

Տեղամասի տարածքի վրա բացակայում է անտառային գոտին և չկան շինություններ: Շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունը նվազեցնելու համար սովորաբար նախատեսվում է չոր եղանակին ճանապարհների պարբերական ջրման աշխատանքներ: Տեղամասը Արամուս գյուղի ասֆալտապատ ավտոճանապարհին միացնող գրունտային ճանապարհի երկարությունը կազմում է մոտ 1.3 կմ: Ընդամենը մոտ 10 օրվա տևողությամբ դաշտային աշխատանքները կարելի է կազմակերպել խոնավ եղանակին և ավտոտրանսպորտի շարժով փոշի չառաջացնել: Ճանապարհների կառուցում չի նախատեսվում: Բացահանքից հեռացված մինչև 2մ հզորության մակաբացման փուխր ապարների և մինչև 1 մ հզորության հողմահարման շերտի (ընդհանուր մոտ 3մ) զանգվածը ենթակա է հետ վերադարձման արդյունահանված տարածք և պետք է կատարվի ամրացում-նստեցում: Բացահանքից ընդհանուր հեռացված և հետլցման ենթակա ապարների ծավալը կկազմի $3\text{մ} \times 40\text{մ}^2 = 120\text{մ}^3$ (այս ծախսերը հաշվառված են փորձնական հանույթի արժեքի մեջ): Կկատարվի փորձնական բացահանքի մակերեսի ռեկուլտիվացիա:

Անվտանգության տեխնիկան

Աշխատանքային ծրագրով բոլոր տեսակի լեռնային աշխատանքների կատարումը նախատեսվում է անվտանգության միասնական կանոնների (ԱՄԿ) պահանջներին լրիվ համապատասխան:

Այդ պահանջներից անհրաժեշտ է նշել.

- Բոլոր աշխատողները, որոնք ընդունվում են աշխատանքի, պետք է անցնեն անվտանգության տեխնիկայի նախնական ուսուցում:

- Յուրաքանչյուր բանվոր, մինչև աշխատանքները սկսելը, պետք է համոզվի, որ իր աշխատատեղի անվտանգությունը ապահոված է :

Բոլոր աշխատակիցները կապահովվեն համազգեստով և անհատական պաշտպանության միջոցներով:

Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Տիգիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները կունենան համապատասխան խլացուցիչներ:

Լեռնատրանսպորտային սարքավորումները պետք է թույլ տան աշխատել միայն այն դեպքում, եթե նրանք սարքին են:

Աշխատակազմը կունենա խմելու որակյալ ջրի, զուգարանի հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ:

Աշխատատեղերում՝ հասանելի վայրում, կլինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ (կրակմարիչներ, ավազ, բահ և այլն):

Ընկերությունը աշխատակիցների նկատմամբ խտրական գործելակերպ և իրավունքների սահմանափակում չի կիրառելու:

ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների «Արմենիուս-2» տեղամասի ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը ներկայացվել է ազդակիր համայնքի բնակիչներին, ներկայացվել են օգտակար հանաձոների երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ծրագրի նպատակը:

Ընկերության ներկայացուցիչների կողմից հնարավորինս մանրամասնորեն տրվել է նախատեսվող գործունեության բնութագիրը՝ օգտագործվող բնական ռեսուրսները ու նյութերը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, քննարկվել է նախատեսվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը:

Ազդակիր համայնքի բնակիչները ընդհանուր առմամբ դրական են վերաբերվել նախատեսվող գործունեությանը և համայնքը տվել է իր նախնական համաձայնությունը:

Ինժեներատեխնիկական միջոցառումները

- Քաղաքացիական պաշտպանության գծով ինժեներատեխնիկական միջոցառումներն ուղղված են աշխատողներին պաշտպանելու գամմա ճառագայթների ազդեցությունից, պատերազմի ժամանակ տեղանքի ռադիոակտիվ վարակման ժամանակ:
- Մարդկանց փոքր քանակի պատճառով նախատեսվում է օգտվել մոտակա բնակավայրի բնակիչների համար նախատեսված հակառադիացիոն թաքստոցներից:

2.2. Նախագծման իրավական հիմքը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը մշակվել է ՀՀ օրենքների, ՀՀ կառավարության որոշումների, նախարարների հրամանների, գործող մեթոդակարգերի, ինչպես նաև միջազգային համաձայնագրերի հիման վրա:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախագծելիս և իրականացնելիս ընկերությունն առաջնորդվելու է մասնավորապես ՀՀ հետևյալ օրենսդրական իրավական ակտերով.

- ՀՀ Ընդերքի մասին օրենսգիրք (ՀՕ-280, 28.11.2011թ.), որով սահմանվում են ՀՀ տարածքում ընդերքօգտագործման սկզբունքներն ու կարգը, կարգավորվում են ընդերքն օգտագործելիս բնությունը և շրջակա միջավայրը վնասակար ազդեցություններից պաշտպանության, աշխատանքների կատարման անվտանգության ապահովման, ինչպես նաև ընդերքօգտագործման ընթացքում պետության և անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանության հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Հողային օրենսգիրք (ՀՕ-185, 02.05.2001թ.), որը սահմանում է հողային հարաբերությունների պետական կարգավորման կատարելագործման, հողի տնտեսավարման տարբեր կազմակերպական-իրավական ձևերի զարգացման, հողերի բերրիության, հողօգտագործման արդյունավետության բարձրացման, մարդկանց կյանքի ու առողջության համար բարենպաստ շրջակա միջավայրի պահպանման և բարելավման, հողի նկատմամբ իրավունքների պաշտպանության իրավական հիմքերը:

- ՀՀ Ջրային օրենսգիրք (ՀՕ-373, 04.06.2002թ.), որով կարգավորվում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերությունները:

▪ ՀՀ Անտառային օրենսգիրք (ՀՕ-211, 24.10.2005թ.), որը կարգավորում է ՀՀ անտառների և անտառային հողերի կայուն կառավարման՝ պահպանության, պաշտպանության, վերականգնման, անտառապատման և արդյունավետ օգտագործման, ինչպես նաև անտառների հաշվառման, մոնիթորինգի, վերահսկողության և անտառային հողերի հետ կապված հարաբերությունները:

▪ «Բուսական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-22, 23.11.1999թ.), որը սահմանում է պետական քաղաքականությունը բնական բուսական աշխարհի գիտականորեն հիմնավորված պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում:

▪ «Կենդանական աշխարհի մասին» ՀՀ օրենք (ՀՕ-52, 03.04.2000թ.), որը սահմանում է Հայաստանի Հանրապետության տարածքում կենդանական աշխարհի վայրի տեսակների պահպանության, պաշտպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականությունը:

▪ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-121, 11.10.1994թ.), որի առարկան մթնոլորտային օդի մաքրության ապահովման, մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների նվազեցման ու կանխման բնագավառում հասարակական հարաբերությունների կարգավորումն է:

▪ «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք (ՀՕ-211, 27.11.2006թ.), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

▪ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (ՀՕ-110, 21.06.2014թ., խմբագրվել է 03.05.2023թ. ՀՕ-150-Ն), որը կարգավորում է Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատումների, շրջակա միջավայրի վրա ազդեցության պետական փորձաքննության ոլորտի հասարակական հարաբերությունները:

▪ Թափոնների մասին ՀՀ օրենք (ՀՕ-159-Ն, 24.11.2004թ.), որը կարգավորում է թափոնների հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, հեռացման, ծավալների կրճատման և դրանց հետ կապված այլ հարաբերությունների, ինչպես նաև մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելման իրավական և տնտեսական հիմքերը:

▪ ՀՀ կառավարության 14.12.2017թ.-ի թիվ 1643-Ն որոշում, որը կիրառվում է Հայաստանի Հանրապետության տարածքում խախտված հողերի հաշվառման, հողաշինարարական, քարտեզագրման, կանխատեսվող ու իրականացման ենթակա ռեկուլտիվացման աշխատանքների նախագծման, ռեկուլտիվացման,

ռեկուլտիվացված հողերի նպատակային նշանակության ուղղությունների որոշման, ինչպես նաև նպատակային ու գործառական նշանակությանը համապատասխան՝ դրանց հետագա օգտագործման ժամանակ:

- ՀՀ կառավարության 14.08.2014թ.-ի N781-Ն որոշում, որը սահմանում է Հայաստանի Հանրապետության բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման ընթացակարգը:

- ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշում, որը սահմանում է ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը:

- ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն որոշում, որով սահմանվել են հողի բերրի շերտի հանման նորմերի որոշմանը և պակաս արդյունավետ հողերի բարելավման համար հողի բերրի շերտի պահպանմանն ու օգտագործմանը ներկայացվող պահանջները:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N71-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ կենդանիների Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 29.01.2010թ.-ի N72-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բույսերի Կարմիր գիրքը:

- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:

- ՀՀ կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի N 967-Ն որոշում, որով հաստատվել է ՀՀ բնության հուշարձանների ցանկը ըստ տեսակների և տեղադիրքի:

- «Հողի բերրի շերտի օգտագործման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 08.09.2011 թ. N 1396-Ն որոշումը,

- «Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով մշտադիտարկումների իրականացման, վճարների չափերի հաշվարկման եվ վճարման կարգը սահմանելու մասին» ՀՀ Կառավարության 10 հունվարի 2013 թվականի N 22-Ն որոշումը,

- «Ընդերքօգտագործման թափոնների կառավարման պլանի և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանի օրինակելի ձևերը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N 676-Ն որոշում,

- «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության 18.08.2021թ. N 1352-Ն որոշում,

- «Շրջակա միջավայրի պահպանության դրամագլխի օգտագործման և հատկացումների չափերի հաշվարկման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի օգոստոսի 23-ի N 1079-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Կառավարության 21.10.2021թ. N 1733-Ն որոշում

- Հրաման N6-Ն 07.01.2022թ. Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարի 2012 թվականի դեկտեմբերի 24-ի N365-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին

- ՀՀ կառավարության 20.01.2005թ.-ի N64-Ն Որոշում, որով հաստատվել են ջրակեղևահամակարգերի սանիտարական պահպանման, հոսքի ձևավորման, ստորերկրյա ջրերի պահպանման, ջրապահպան, էկոտոնի և անօտարելի գոտիների տարածքների սահմանման չափորոշիչները,

- ՀՀ կառավարության 15.06.2017թ.-ի N675-Ն Որոշում, որով սահմանվել են ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման պլանների բովանդակությունը, ինչպես նաև ընդերքօգտագործման թափոնների կառավարման և ընդերքօգտագործման թափոնների վերամշակման միջոցառումները:

- ՀՀ կառավարության 17.08.2017թ.-ի N990-Ն Որոշում, որով սահմանվել են ֆինանսական երաշխիքի բովանդակությունը և դրան ներկայացվող չափորոշիչները, դրանց ներկայացվող որակական չափանիշների գնահատման, ինչպես նաև ֆինանսական երաշխիքի հաշվարկման կարգը:

- ՀՀ կառավարության 25.09.2014թ.-ի N1059-Ա որոշում, որով հաստատվել է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների ռազմավարությունը, պահպանության և օգտագործման բնագավառում պետական ծրագիրը և ծրագրի միջոցառումները:

- ՀՀ կառավարության 27.05.2015թ. N 764-Ն Որոշում, որով կարգավորվում են շրջակա միջավայրի վրա նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում հնարավոր տնտեսական վնասների գնահատման և հատուցման հետ կապված հարաբերությունները:

- ՀՀ Կառավարության 8 դեկտեմբերի 2022 թվականի N 1909-Ն որոշում, որով հաստատվել է Հրագրանի ջրավազանային կառավարման տարածքի 2022-2027 թվականների կառավարման պլանը::

- Շրջակա միջավայրի նախարարի «25» հոկտեմբերի 2022թ. N 369-Ն հրաման, ըստ որի Հավելված 2-ի՝ Էկոլոգիական անվտանգության պահանջների և բնապահպանական սահմանափակումների ապահովման նպատակով ընդերքօգտագործողի կողմից նախատեսվող գործունեության իրականացման

ընդառաջ մշակվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը, որում ներառվում են շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության շրջանակները և շրջակա միջավայրի օբյեկտները:

▪ ՀՀ կառավարության 24.12.2003թ. N 1793-Ն Որոշում, որով հաստատվել է Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը:

▪ ՀՀ Կառավարության 11.11.2021թ. N 1848-Ն Որոշում, որով հաստատվել է ընդերքօգտագործման հետևանքով խախտված հողերի, ընդերքօգտագործման թափոնների փակված օբյեկտների ռեկուլտիվացիոն աշխատանքների իրականացման, այդ թվում՝ կենսաբանական վերականգնման ուղեցույցը՝ համաձայն հավելվածի:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախագծելիս և իրականացնելիս ընկերությունն առաջնորդվելու է նաև մասնավորապես հետևյալ միջազգային համաձայնագրերով.

1. «Եվրոպայի վայրի բնության և բնական միջավայրի պահպանության մասին» կոնվենցիա (Բեռն)
2. «Միջազգային կարևորության խոնավ տարածքների մասին, հատկապես որպես ջրաթռչունների բնակավայր» կոնվենցիա (Ռամսար.)
3. «Միգրացվող վայրի կենդանիների տեսակների պահպանության մասին» կոնվենցիա (Բոնն)
4. «Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանական ու բուսական աշխարհի տեսակների միջազգային առևտրի մասին» կոնվենցիա (CITES) (Վաշինգտոն)
5. Լանդշաֆտների եվրոպական կոնվենցիա (Ֆլորենցիա)
6. «Համաշխարհային մշակութային և բնական ժառանգության պահպանության մասին» կոնվենցիա (Փարիզ.)
7. ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիա (Նյու Յորք)
8. «Կենսաբանական բազմազանության մասին» կոնվենցիա (Ռիո-դե-ժանեյրո)
9. «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» կոնվենցիա (Ստոկհոլմ) (վավերացվել է ՀՀ կառավարության կողմից 2003թ.-ին)
10. «Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» կոնվենցիա (Բազել.)

3.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԵԼԱԿԵՏԱՅԻՆ ՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

3.1. Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման նպատակով օգտագործված ելակետային տվյալների աղբյուրները, հավաքագրման և ուսումնասիրությունների իրականացման մեթոդները

Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատումը ներառում է նախատեսվող գործունեության կողմից զբաղեցվող հողատարածքը, ինչպես նաև դրա անմիջական հարևանությամբ գտնվող տարածքները և ցանկացած այլ տարածքներ, որոնց վրա կարող են ազդել նախատեսվող գործունեությամբ պայմանավորված աշխատանքները: Շրջակա միջավայրի ելակետային վիճակի գնահատման համար օգտագործվել է հիմնականում պաշտոնական էլեկտրոնային բաց աղբյուրներում առկա տեղեկատվությունները, ընդերքի տեղամասում և նրա շրջանում նախկինում կատարված ուսումնասիրությունների արդյունքները:


3.2. Տեղադիրքը

ՀՀ Կոտայքի մարզի Արամուսի բազալտների հանքավայրի «Արմենիու-2» տեղամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, Կոտայքի մարզում, Արամուս գյուղի կենտրոնից մոտ 1.5-2.2կմ հարավ: Մոտակա բնակավայրերն են Արամուս, Կամարիս, Զովք և Զորաղբյուր գյուղերը:

Երկաթգծի մոտակա Աբովյան կայարանը գտնվում է տեղամասից մոտ 8կմ հեռավորության վրա:

Արամուս բնակավայրի մոտակա բնակելի շինությունները գտնվում են հայցվող ընդերքի տեղամասից 1.0կմ, Կամարիս բնակավայրի բնակելի շինությունները՝ 1.5կմ, Զորաղբյուր բնակավայրի շինությունները՝ 2.5կմ, Զովք բնակավայրի արտադրական կառույցները՝ մոտ 2.7կմ հեռավորությունների վրա: Արամուս բնակավայրի այգեգործական տնտեսությունները գտնվում են տեղամասից մոտ 2.0կմ հեռավորության վրա:

S-6-37 Աբովյան-Գեղաշեն-Զովք-Հ3 մարզային նշանակության ավտոմոբիլային ճանապարհը շրջանցում է տեղամասը՝ հյուսիս-արևելք-արևելք-հարավ ուղղությամբ:



Նկար 1. Կոտայքի մարզի ակնարկային քարտեզ

S-6-42 Մայակովսկի-Չորադրյուր-Չ3 ավտոճանապարհը անցնում է տեղամասից մոտ 2.6կմ արևմուտք: Տեղամասից մոտ 0.2կմ արևելք անցնում է Արամուս գյուղը Զովք գյուղին կապող տեղական նշանակության ավտոճանապարհը:

Տեղամասից 0.6-1.0կմ հեռավորության վրա անցնում է Կոտայքի ջրանցքը:

Տեղամասը գտնվում է 1540-1573մ բացարձակ բարձրությունների վրա:

Շրջանի կլիման ցամաքային է՝ պայմանավորված չոր ամառով և ցուրտ ձմեռով: Զյունը տեղում է ուշ աշնանը և պահպանվում մոտ 5 ամիս: Տեղումների միջին տարեկան քանակը 300-400մմ է, իսկ տարեկան միջին ջերմասիճանը՝ +10C°- +14C° է: Ամռանը ջերմաստիճանը հասնում է մինչև +35C°, իսկ ձմռանը՝ -23C°-ի:

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրությունների հայցվող տեղամասի մակերեսը կազմում է մոտ 12.7հա:

Ստորև ներկայացված է հայցվող տեղամասի ծայրակետային կոորդինատները ARM WGS-84 կոորդինատային համակարգով և իրավիճակային հատակագիծը.


Հայցվող տարածքի ծայրակետերի կոորդինատները					
Հ/Հ	Կոորդինատները		Կոորդինատները		
	X	Y		X	Y
1	4455552,6220	8471782,0949	17	4455097,7577	8471857,8709
2	4455692,0000	8471755,0000	18	4455124,2788	8471942,1276
3	4455689,0123	8471670,3478	19	4455566,3073	8471863,9457
4	4455579,3096	8471681,0613			
5	4455515,0431	8471764,4503			
6	4455534,7371	8471684,5133			
7	4455402,3444	8471675,3659			
8	4455314,9420	8471661,7937			
9	4455271,3576	8471636,1272			
10	4455169,5672	8471635,2101			
11	4455081,2411	8471693,0311			
12	4455088,0263	8471738,3782			
13	4455068,0531	8471742,0609			
14	4455076,0811	8471799,6323			
15	4455042,2455	8471804,7288			
16	4455054,5795	8471864,8039			

ԻՐԱՎԻՃԱԿԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԻՏ

(հատված K-38-138-A-ր թերթից)

Մասշտաբ 1 : 25 000

Կոորդինատային համակարգը՝ WGS-84 (ARMREF 02)




Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր



Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք

Կատարող՝ *Արամյան* Ն.Հակոբյան (Ռբակավորման վկայական N0150, տրվ. 29.03.2012թ.)

05.11.2024թ.



— Արամուսի բազալտների Արմենիու-2 երևակման հայցվող տարածք

Նկար 2. Հայցվող տարածքի տեղադիրքը

Տեղամասի հեռավորությունը Արամուս բնակավայրից՝ ավելի քան 1.0 կմ, Կամարիս բնակավայրից՝ 1.5 կմ, Գեղաշեն բնակավայրից՝ 3.8 կմ, Ջովք բնակավայրից՝ 2.7 կմ, Չորաղբյուր բնակավայրից՝ 2.5 կմ, Մայակովսկի-Չորաղբյուր-Հ3 ավտոճանապարհից՝ 2.6 կմ, Արամուս-Ջովք ճանապարհից՝ 0.2 կմ


3.3. Ռելիեֆ, երկրաձևաբանություն

Լեռնագրական տեսակետից Արմենիու-2 բազալտների տեղամասի շրջանի տարածքը հարում է Կոտայքի սարավանդին: Արևելքից Կոտայքի սարավանդը սահմանափակվում է Գեղամա և Ողջաբերդի լեռնաշղթաներով, հյուսիսում՝ Հատիս և Գուրանասար հանգած հրաբուխներով, արևմուտքում՝ Հրազդան գետով: Հարավ-արևելքում սարավանդը աստիճաբար ցածրանալով ձուլվում է Արարատյան դաշտին, արևելքում առաջացնում է Ավանի գոգավորությունը, ապա Գետառ և Ջրվեժ գետերի ջրբաժանը: Սարահարթն ունի արևմտյան և հարավ-արևմտյան ընդհանուր թեքություն, 1200-1500մ բարձրություն, թույլ մասնատված, լավային ալիքավոր մակերևույթ: Տեղ-տեղ բարձրանում են 50-60մ հարաբերական բարձրությամբ մնացորդային բլրակներ և խարամային կոներ: Նշանակալից հրաբխային կոներից է


Գուրթանասարը, որի բարձրությունը 2299.6 մ է (հարաբերական բարձրությունը՝ 300մ-ից մի փոքր ավելի): Հատած կոնի ձևով լեռնագանգված է՝ հարավային կողմից ճեղքվածք ունեցող խառնարանով: Լանջերն ունեն 25-45° թեքություն: Արևմուտքից՝ Պտղնի գյուղի մոտակայքից անցնում է բազալտներով և տուֆերով կազմված բլրակների մի շղթա: Նմանատիպ բլրակների շղթա է ձգվում Արամուս գյուղի շրջանում հարավ-արևելյան ուղղությամբ: Ուսումնասիրվող շրջանի բացարձակ նիշերը տատանվում են 1400մ-ից մինչև 2000մ:

Լեռնագանգվածների թեք ու անտառազուրկ լանջերը կտրտված են հեղեղատներով ու ոչ խորը գետահովիտներով: Շրջանի տարածքի մեծ մասում տեղանքի թեքությունները 8°-ից չեն անցնում:

Շրջանի ձևաբանական և լանջերի թեքության սխեմատիկ քարտեզները բերվում են ստորև նկար 3-4-ում:



Նկար 3. Շրջանի ձևաբանական սխեմատիկ քարտեզ



Սկար 4. Լանջերի թեքության սխեմատիկ քարտեզ

Շրջանի երկրաբանություն

Արամուսի բազալտների հանքավայրի շրջանի երկրաբանական կառուցվածքի առանձնահատկությունները պայմանավորված են Հատիս (2530), Գուքանասար (2303), Կովասար (2402) և այլ հրաբուխների գործունեությունների արգասիքներով:

Շրջանի երկրաբանական կառուցվածքում մասնակցում են նեոգեն-չորրորդականի հրաբխային ապարները և ժամանակակից ալյուվիալ-դելյուվիալ առաջացումները:

Շրջանի երկրաբանական կտրվածքն ըստ Հ.Զուբարյանի և Ի.Գևորգյանի տվյալների ներքևից վերև ներկայացված է հետևյալ կերպ.

Միջին էոգենի ավազաքարեր՝ ալկրոլիտների, արգիլիտների, տուֆաավազաքարերի, նումուլիտային կրաքարերի ենթաշերտերով:

Վերին էոգենի ավազաքարեր՝ ալկրոլիտների, արգիլիտների, տուֆաավազաքարերի, մանրաբեկորային կոնգլոմերատների և կրաքարերի շերտախումբ:

Ստորին օլիգոգեն (Շորաղբյուրի շերտախումբ), տարբեր հասիկայնության ավազաքարերի և կրաքարային ավազաքարերի, ալևրոլիտների, արգիլիտների, կավերի շերտախումբ:

Վերին օլիգոգեն-ստորին միոգենի (Հացավանի շերտախումբ) ապարները ներկայացված են խայտաբղետ կավերով, ավազաքարերով, կոնգլոմերատներով:

Միջին միոգենի ստորին հորիզոնը ներկայացված է (Ջրվեժի գիպսաբեր շերտախումբ) քարաղի հզոր շերտերի և աղատար կավերի շերտախմբով, ինչպես նաև գիպսատար կավերով և գիպսի զանգվածային առաջացումներով:

Միջին-վերին միոգենը ներկայացված է կավերով, որոնք ներփակում են ավազաքարերի կեղծօլիտային և խեցային կրաքարերի փոքր ենթաշերտեր, կոնգլոմերատներ, տուֆոկոնգլոմերատներ և պեմզային տուֆեր:

Վերին միոգենի միոտիս-պոնտի հարկի առաջացումները տարանջատված են որպես Ողջաբերդի շերտախումբ և ներկայացված են տուֆոկոնգլոմերատներով, պեմզաներով, պեմզային ավազներով, զլաքարերով և անդեզիտային հոսքերով:

Վերին միոգենի հասակի են վերագրվում անդեզիտաբազալտների, մանդելշտայնային բազալտների միջշերտային ներդրումներ և դայկաներ:

Ստորին պլիոցենի (Հատիսի շերտախումբ) հասակի ապարները, որոնք ներկայացված են թթու կազմի ռիոլիտներով, ռիոլիտադացիտներով, վանակատով, պեոլիտներով և նրանց բեկորային տարատեսակներով՝ աննշան անկյունային աններդաշնակությամբ ծածկում են Ողջաբերդի հաստվածքի ապարներին: Այս շերտախմբի ապարները մերկանում են ընդմիջումներով, նկատվում է հաստվածքի հզորության կտրուկ փոփոխություններ՝ մի քանի տասնյակ մետրից մինչև 300-400մ:

Այս ապարների հզորությունների կտրուկ մեծացում նկատվում է նույն ապարների էքստրուզիաների զարգացման շրջանում:

Մերկացումները մեծ տարածք են զբաղեցնում Հրազդան գետի ձախ ափին, իսկ շրջանի տարածքից դուրս, Գեղամա լեռների արևմտյան լեռնաճյուղի Գուքանասար լեռան շրջանում՝ Կարենիս և Ջրաբեր գյուղերի միջև, ինչպես նաև Գեղամա լեռնաշղթայի հարավ-արևմտյան լեռնաճյուղի՝ Ազատ և Ուղտաղբյուր գետերի վերին հոսանքների ավազաններում:

Այս շերտախմբի տուֆերը հոծ դեղնագույն ապարներ են, որոնք ըստ տարածման առանձին տեղերում անցնում են կատարում դեպի ռիոլիտները: Անցումը տուֆերից տուֆաբեկչիաների, տուֆաբեկչիաներից՝ շեղաքարերի, իսկ վերջիններիցս էլ

վանակատ-ռիոլիտներ-ռիոլիտային լավաների և էքստրուզիաների, կատարվում է աստիճանական:

Ստորին պլիոցենին են վերագրվում նաև պիրոքսենային բազալտների սուբինտրուզիվ առաջացումներ, որոնք տարածված են Զառ և Ակունք բնակավայրերի տարածքում:

Ստորին պլիոցենի վերին մասը ներկայացված է անդեզիտների, անդեզիտաբազալտների, դոլերիտային բազալտների, անդեզիտադաջիտների լավային հոսքերով և հրաբխածին խարամներով: Լայն տարածված են ներկայացված քարտեզի կենտրոնական մասում:

Վերին պլիոցենի (Արգելի լավային շերտախումբ) ստորին մասում առկա են այս հասակի լճային առաջացումներ և կավային դիատոմիտներ, պեմզային ավազներ, գլաքարեր, գետային գլաքարեր, իսկ վերին մասում՝ դոլերիտային բազալտներ:

Չորրորդական հասակի առաջացումներ

Չորրորդականի հասակի լավաները ստորաբաժանվում են ստորին, միջին և վերին չորրորդականի, դրանց կազմում էլ առանձնացվում են առանձին դարսաշերտեր և հոսքեր: Ստորին չորրորդական հասակի հրաբխային առաջացումները ներկայացված երկրաբանական քարտեզի սահմաններում չեն մերկանում:

Շրջանում չորրորդականի հասակի առաջացումների ստորին մասը ներկայացված է միջին-չորրորդական հասակի անդեզիտային, անդեզիտաբազալտային, բազալտային կազմի լավային ծածկոցներով և հոսքերով, ինչպես նաև միջին չորրորդականի վերին մասին վերագրվող Երևան-Լենինականի տիպի տրաբխային տուֆերով:

Վերին չորրորդականի լավային ծածկոցները զբաղեցնում են մեծ տարածքներ և ներկայացված են բազալտների, անդեզիտաբազալտների լավային ծածկոցներով:

Այս լավաների արտավիժումը կատարվել է հիմնականում Գեղամա լեռնաշղթայի առանցքային գծով դասավորված բազմաթիվ հրաբխային կենտրոններից:

Հրաբխային խարամային խառնարանների կենտրոնները, մեծամասամբ պահպանելով իրենց բնորոշ սկզբնական կոնաձև տեսքը, էռոզիայի հետևանքով մասնակիորեն լվացվել են:

Արտավիժված լավային հոսքերը հոսել են հիմնականում հին գետային հուներով և հովիտներով: Այդ լավային հոսքերի և ծածկոցների մերձակերևույթային մասերում մեծ տարածում ունեն այսպես կոչված «քարային ծովերը» (քարացրոններ):

Հիմնականում առանձնացվել են վեց լավային հոսքեր, որոնք ներքևից վերև, հերթականությամբ ծածկում են միմյանց և ներկայացված են անդեզիտաբազալտային, բազալտային, հազվադեպ էլ անդեզիտային կազմի ապարներով: Ներկայացվող քարտեզի սահմաններում արտացոլված են Ջրաբերի անդեզիտաբազալտային լավային հոսքը, Ագուսարի անդեզիտաբազալտների լավային շերտախմբի 1-ին և 2-րդ հոսքերը, Սևսարի անդեզիտաբազալտների լավային 1-ին հոսքի ապարները:

Շամանակակից այրուվիալ-դելյուվիալ, պրոյուվիալ առաջացումները հիմնականում ներկայացված են տարբեր կազմի գետաքարերից, զլաքարերից, մեծաբեկորներից, խճաքարերից, ավազաքարերից, կավավազներից և կավերից:

Տեկտոնական տեսակետից շրջանը գտնվում է հայկական մեգանտիկլինորիումի (Արզականի զանգված) կարային գծի մի հատվածի՝ նրա մասը կազմող բարդ, տեղախախտված հարավ-արևմտյան լանջի և Արաքսյան սինկլինորիումի մերձլանջային գծի վրա:

Առանձնացված ստրուկտուրաների հավաստիությունը շրջանի ոչ բոլոր մասերի համար է միանշանակ՝ կախված դրանց մերկացվածության աստիճանից: Հարավային և հյուսիսային հատվածները լավ են մերկացված, իսկ կենտրոնական և արևելյան մասերը ծածկված են չորրորդականի հասակի լավաներով, և այդ տեղի տեկտոնիկայի մասին պատկերացումները հիմնականում ստացվել են երկրաֆիզիկական և մոսր ցանցով հորատված հորատանցքերի տվյալներով:

Շրջանի տարածքից դուրս՝ հյուսիսում, Հրազդան գետի աջ ափին հստակ ընդգծված է Արզականի զանգվածը, որը համարվում է Արզական-Ապարանի բարձրացման՝ ամբողջությամբ հյուսիս-արևմտյան ուղղությամբ ձգվածության կազմիչ մասերից:

Այդ բարձրացման այդպիսի ձևը առաջին հերթին թելադրվում և վերահսկվում են վերին կավիճ-պալեոգենյան նստվածքակուտակային՝ հյուսիս-արևելքից Սևանի և հարավ-արևմուտքից՝ Մերձերևանյան իջվածքների կառուցվածքներով:

Շրջանի կենտրոնական մասում (Ֆանտան-Աբովյան) ընդգծվում է բավականին խոշոր մուլդա՝ Ֆանտանի բրախիսինկլինալը, որը հյուսիս-արևելյան ուղղությամբ՝ Երևան-Ֆանտան գծի երկայնքով մի փոքր ձգված է:

Արևելյան մասը համընկնում է Գեղամա հրաբխածին լեռնաշղթայի հետ: Մի շարք անուղղակի տվյալներով կարելի է ենթադրել, որ Արզական-Ապարան բարձրացման շարունակությունը գտնվում է ավելի երիտասարդ՝ Գեղամա լեռնաշղթայի առաջացումների տակ:

Բացի դրանից, Գեղամա լեռների գագաթային մասերում գծայնորեն տեղադրված չորրորդականի հրաբխային կենտրոնների համակարգը թույլ է տալիս ենթադրելու այստեղ գոյություն ունեցող խորքային բնույթի խզման առկայությունը:

Նույնատիպ խզումները հստակ ընդգծված են ակրոլուսանկարներում: Այս տարածքում շատ են դիզյունկտիվ խախտումները:

Արամուսի բազալտների Արմենիուս-2 տեղամասի հաստվածքը ծագումնաբանորեն հարում է Կոտայքի սարավանդի ստորին պլիոցենի լավային ծածկոցին, տեղակայված է վերջինիս արևելյան հատվածում: Երկրաբանական կառուցվածքում մասնակցում են միջին-վերին միոցենի նստվածքային և հրաբխային առաջացումները, ստորին պլիոցենի առաջացումները և ժամանակակից դելյուվիալ առաջացումները:

Ստորին պլիոցենի վերին մասը ներկայացված է անդեզիտների, անդեզիտաբազալտների, դոլերիտային բազալտների, անդեզիտադացիտների լավային հոսքերով և հրաբխածին խարամներով: Արամուսի բազալտների Արմենիուս-2 տեղամասի օգտակար հաստվածքը ներկայացված է այս հասակի դոլերիտային բազալտներով, որոնք տարածաշրջանում մեծ տարածում ունեն:

Բազալտների օգտակար հաստվածքի հզորությունը այս տեղամասից 0.5-1կմ դեպի հարավ-արևմուտք գտնվող Շամիրամ տեղամասում կազմում է միջինը՝ 6.8մ, մակաբացման ապարների հզորությունը՝ միջինը 4.3մ, իսկ 0.3կմ դեպի արևելք գտնվող Արմենիուս տեղամասում բազալտների հզորությունը տատանվում է 8-18մ սահմաններում, մակաբացման ապարներինը՝ 1.5-2.8մ սահմաններում:

Բազալտների հաստվածքի մերձհատակային մասը ներկայացված է խարամացված, խոռոչավոր, ուժեղ ճեղքավորված տարատեսակներով, որոնց հզորությունը հասնում է մինչև 2.1մ-ի: Խարամացված բազալտների առկայությունը բացատրվում է լավայի արագ սառեցման և քարացման պայմաններով:


Բազալտների հաստվածքի վերին հատվածում ապարները հողմահարված են, ճեղքավորված, ջարդոտված: Բազալտները մանրահատիկ են, միատարր, պորֆիրային կամ միկրոդոլերիտային ստրուկտուրայով: Ապարի միներալոգիական կազմում մասնակցում են պլագիոկլազը, պիրոքսենը, օլիվինը և մագնետիտը:

Ժամանակակից առաջացումները առաջացնում են համատարած ծածկոց և ներկայացված են դելյուվիալ նստվածքներով: Դելյուվիալ նստվածքները

ներկայացված են ավազակավային նյութով թույլ կապակցված փուխր-բեկորային ավազախճային, դոլերիտային բազալտների խճաբեկորային առաջացումներով:

3.4. Սեյսմիկ կառուցվածք, արտաձին երկրաբանական երևույթներ


Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N102-Ն հրամանի՝ Արամուսի բազալտի հանքավայրի Արմենիուս-2 տեղամասի տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 400 սմ/վ2 կամ 0.4g (նկար 5):



Նկար 5.

Հայցվող տեղամասի տարածքում արտաձին երկրաբանական երևույթների վերաբերյալ տեղեկատվության հիմք է հանդիսանում Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագիրը (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005):

Համաձայն նշված տեղեկագրի, բուն «Արմենիու-2» տեղամասի տարածքում սողանքային երևույթներ արձանագրված չեն (նկար 6): Սողանքային մարմիններ հաշվառված են Ձորաղբյուր և Ջովք բնակավայրերի մոտակայքում: Մոտակա սողանքային մարմինները՝ KOTA-138-0210, KOTA-138-0290 գտնվում են տեղամասի տարածքից համապատասխանաբար 2.8կմ և 3.3կմ հեռավորությունների վրա:




Օ Արամուսի բազալտների Արմենիու-2 երևակում

Նկար 6. Շրջանի սողանքային մարմինների տեղադիրքը

3.5. Կլիմայական պայմաններ

Կլիմայական տեսակետից շրջանը մտնում է չոր ցամաքային, ցուրտ ձմեռով և տաք ամառով բնորոշվող գոտու մեջ: Տեղամասի շրջանի օդի բացարձակ նվազագույն ջերմաստիճանը կազմել է -32.6°C , իսկ առավելագույնը՝ $+38.7^{\circ}\text{C}$, օդի միջին տարեկան ջերմաստիճանը՝ $+9.7^{\circ}\text{C}$: Մթնոլորտային տեղումների տարեկան քանակը կազմում է 445 մմ: Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը կազմում է 74 օր: Քամիների գերակշռող ուղղությունը տարվա բոլոր եղանակներին՝ հյուսիս-արևելքից, տարեկան միջին արագությունը՝ 2.6մ/վրկ: Ստորև նկար 7-ում ներկայացված են շրջանին բնորոշ կլիմայի տիպերի տարածումը:



Նկար 7.

Ստորև աղյուսակներում ամփոփված է տեղեկատվություն օդի ջերմաստիճանը, քամիների, հարաբերական խոնավության, տեղումների և արևափայլի վերաբերյալ (համաձայն «ՀՀՇՆ 22-01-2024 «Շինարարական կլիմայաբանություն» շինարարական նորմեր»-ի՝ ըստ «Եղվարդ» օդերևութաբանական կայանի նորացված տվյալների):

Աղյուսակ 1.

Օդի ամսեկան և տարեկան ջերմաստիճանները

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Միջին տարեկան, °C	Բացարձակ նվազագույն, °C	Բացարձակ առավելագույն, °C
-4.9	-2.8	2.7	9.4	14.4	18.9	22.8	22.8	18.6	11.8	4.8	-1.7	9.7	-32.6	38.7

Աղյուսակ 2.

Օդի հարաբերական խոնավությունը ըստ ամիսների, %

I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	Տարեկան միջին
75	71	65	61	60	53	49	47	49	59	70	76	61

Աղյուսակ 3.

Տեղումների քանակը միջին ամսական/օրական առավելագույն, մմ												
I	II	III	IV	V	VI	VII	VIII	IX	X	XI	XII	տարեկան
35	36	44	60	64	39	26	13	17	40	35	36	445
30	31	42	40	42	29	53	45	35	39	37	28	53

Աղյուսակ 4.

Ձնածածկույթ		
Առավելագույն տասնօրյակային բարձրությունը, սմ	Տարվա մեջ ձնածածկույթով օրերի քանակը	Ձյան մեջ ջրի առավելագույն քանակը, մմ
68	74	156

Քամիներ

Միջին տարեկան մթնոլորտային ճնշում, հՊա	Ամիսներ	Կրկնելիությունը, % Միջին արագությունը, մ/վ								Միջին ամսական տարածումը, մ/վ	Միջին տարեկան արագությունը, մ/վ	Ուժեղ քամիներով օրերի ամսական օր
		Ուղղությունները										
		Հս	Հս-Արլ	Արլ	Հվ-Արլ	Հվ	Հվ-Արմ	Արմ	Հս-Արմ			
866.0	Հունվար	6	48	11	3	15	6	9	2	40	2.6	62
		1.7	1.8	1.7	1.5	1.7	1.9	1.8	1.7			
	Ապրիլ	5	48	7	3	17	10	8	2	23		
		3.0	3.8	2.7	2.4	2.4	2.8	2.7	2.1			
	Հուլիս	6	73	4	1	7	4	4	1	11		
		4.9	5.5	4.9	1.7	3.0	2.5	3.0	1.8			
	Հոկտեմբեր	5	55	6	3	16	8	6	1	31		
		2.7	3.1	2.1	1.9	1.9	2.3	1.8	2.2			

3.6. Մթնոլորտային օդ

ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից մթնոլորտային օդի որակի մշտադիտարկում հայցվող տարածքում, ինչպես նաև ազդակիր Արամուս բնակավայրում չի իրականացվում:

Որոշակի պատկերացում տարածքի օդային ավազանների աղտոտվածության մասին կարելի է ստանալ հաշվարկային եղանակով: Այդ նպատակով ՀՀ Շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մոնիտորինգի կենտրոն»-ի կողմից մշակվել են ժամանակավոր առաջարկություններ, ուր ներկայացված են մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշների կախվածությունը տվյալ բնակավայրի ազգաբնակչության քանակից, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները:

«Վնասակար նյութերի ֆոնային կոնցենտրացիաներ բնակավայրերում, որտեղ բացակայում են մթնոլորտային օդի որակի մոնիթորինգի դիտարկումները»

Բնակչության քանակը (հազար մարդ)	Ֆոնային կոնցենտրացիաներ (մգ/մ ³)			
	Փոշի	Ծծմբի երկօքսիդ (SO ₂)	Ազոտի երկօքսիդ (NO ₂)	Ածխածնի օքսիդ (CO)
50 -100	0.098	0.007	0.034	1.3
10-50	0.095	0.006	0.033	1.1
<10	0.071	0.006	0.023	0.8

Տեղամասի տարածքն ընդգրկված է Աբովյան խոշորացված համայնքի Արամուս բնակավայրի վարչական սահմաններում: Տեղամասից մինչև 2 կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերում (Արամուս, Կամարիս) մշտական բնակչության ընդհանուր քանակը չի գերազանցում 10.0 հազարը, հետևաբար, տեղամասի տարածքի համար որպես մթնոլորտային օդի ֆոնային աղտոտվածության ցուցանիշ պետք է ընդունել. փոշի 0.071մգ/մ³, ծծմբի երկօքսիդ 0.006 մգ/մ³, ազոտի երկօքսիդ 0.023մգ/մ³ և ածխածնի օքսիդ 0.8մգ/մ³:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բնապահպանական միջոցառումների կառավարման պլանը կազմելիս որպես սահմանանիշ կարող են ընդունվել նաև ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N 160-Ն հրամանի հավելված 1-ով ամրագրված նորմատիվները:

Ըստ նշված փաստաթղթի՝ բնակավայրերում անօրգանական փոշու (SiO₂ պարունակությունը 70% և ավելի) առավելագույն միանվագ ՍԹԿ պետք է կազմի 0.15մգ/մ³, միջին օրեկան ՍԹԿ՝ 0.05մգ/մ³:

3.7. Ջրային ռեսուրսներ

Արամուսի բազալտների Արմենիուս-2 տեղամասի տարածքում խոշոր ջրագրական միավորը Հրազդան գետն է որի հունը գտնվում է հայցվող տարածքից

մոտ 8.2կմ հեռավորության վրա: Հրազդանը հանրապետության խոշորագույն ու կարևորագույն գետերից է՝ Արաքսի ձախ վտակը: Ունի 141կմ երկարություն: Ավազանի մակերեսը 2650կմ² է (առանց Սևանա լճի): Մինչև Սևանա լճի մակարդակի արհեստական իջեցումը Հրազդանը սկիզբ է առել լճից Սևան քաղաքի մոտակայքում: Այն սկիզբ է առնում Սևանա լճից, հոսում հարավ-արևմտյան ընդհանուր ուղղությամբ, անցնում Գեղարքունիքի, Կոտայքի մարզերով, Երևան քաղաքով, Արարատի մարզով և թափվում Արաքսը: Գետի ավազանը նրա վերին հոսանքներում սահմանափակված է հյուսիսում Փամբակի, արևմուտքում՝ Ծաղկունյաց և արևելքում՝ Գեղամա լեռնաշղթաներով: Վերին հոսանքում մոտ 20կմ հոսում է դեպի արևմուտք՝ այդ ընթացքում առաջացնելով գալարներ, միջին հոսանքում անցնում է նեղ ու խոր (120-150մ) կիրճով, ստորին հոսանքում ուղղվում է դեպի հարավ-արևելք, դուրս գալիս Արարատյան դաշտ, դառնում հանդարտահոս ու ծովի մակարդակից 820մ բարձրության վրա լցվում Արաքսը: Գետի ընդհանուր անկումը կազմում է 1100 մ: Խոշոր վտակներն են Մարմարիկը, Ծաղկաձորը, Դալարը, Արայի գետը, Գետառը:

Լեռնագրական, ջրաերկրաբանական և երկրաբանական պայմաններով գետի ջրհավաք ավազանը բաժանվում է միմյանցից խիստ տարբերվող երկու մասի: Աջ ափում գերակշռում են ջրակայուն շերտերը, ձախ կողմից, ընդհակառակը, ջրահավաք ավազանը կազմված է խիստ ճեղքավորված ջրաթափանց ապարներից: Այս է պատճառը, որ գետը նշանակալի վտակներ ունի միայն աջ ափից (Մարմարիկ, Դալար, Արայիգետ): Մնումը հիմնականում ստորգետնյա (51%) և հալոցքային (37%) է, վարարումը՝ զարնանը, հորդացումները՝ ամռանն ու աշնանը:

Շնորհիվ այն բանի, որ Հրազդան գետը սկիզբ է առնում Սևանա լճից, ունի մեծ անկում, հոսում է Արարատյան գոգահովտով, հանրապետության կենտրոնական շրջաններով և մայրաքաղաքի միջով, այն իրավամբ համարվում է Հայաստանի հիմնական ջրային երակը: Գետը լիարժեք կերպով օգտագործվում է Սևան-Հրազդան ջրատնտեսական համալիրում ոռոգման և էներգետիկ նպատակներով:

Հրազդան գետի բազմամյա միջին տարեկան հոսքի բնութագրիչները բերված են ստորև աղյուսակ 7-ում:

Գետը	Ծախսը, մ3/վ	Տարեկան հոսքը, մլն.մ3	Հոսքի մոդուլը, լ/վ կմ2	Հոսքի բարձրությունը, մմ	Հոսքի գործակիցը
Հրազդան	22.6	714	9.78	308	0.57


ՀՐԱԶԴԱՆ ԳԵՏԻ ԱՎԱԶԱՆԻ ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ՋՐԵՐԻ ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ԴԻՏԱՅԱՆՑ



Նկար 8

Գետի ջրերի որակը ներկայացվում է ըստ ՀՀ շրջակա միջավայրի նախարարության «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ-ի 2024թ. տվյալների: Տեղամասին ամենուրեք գտնվող դիտակայանում՝ Արզնի ՀԷԿ-ից 0.5կմ ներքև (դիտակետ 54) գետի ջրերում նիտրիտ իոնի և ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաները գտնվում են թույլատրելի սահմաններում (նկար 9):

Տեղամասի տարածքում գետային ցանց չկա: Տեղամասից մոտ 3.2կմ հեռավորության վրա հոսում է Գետառ գետը: Գետի երկարությունը 24 կմ է, ավազանը՝ 158 կմ²: Մնումը մթնոլորտային տեղումներից և ստորերկրյա ջրերից է, հորդացումը՝ գարնան ամիսներին:



Նկար 9.

Գծապատկեր 13. Հրազդան գետում նիտրիտ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը



Գծապատկեր 14. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիայի փոփոխությունը


Տեղամասի շրջանում, տեղամասից մոտ 0.7կմ հեռավորության վրա անցնում է Կոտայքի ջրանցքը: Այն սկիզբ է առնում Սևան-Հրազդան կասկադի Արգելի ջրէկի երրորդ աստիճանի ջրաթեքումից (դերիվացիա): Շահագործման է հանձնվել 1962-ին: Ջրանցքի երկարությունը 43կմ է, ջրթողունակությունը՝ 6մ³/վ: Ռոտում է Կոտայքի մարզի (8,3 հազ. հա) և Երևանի շրջակա (192 հա) հողատարածքները:

Հարկ է նշել, որ գետերը հոսում են տեղամասից ավելի քան 3.2կմ հեռավորությամբ, ջրանցքը՝ 0.7կմ, հետևաբար, հայցվող տարածքում իրականավելիք աշխատանքները որևէ կերպ չեն ազդելու և գետերի, և ջրանցքի ջրերի որակի և քանակի վրա: Երևակման տարածքում, ըստ հարակից տարածքների հանքավայրերում կատարված հիդրոերկրաբանական ուսումնասիրությունների և դիտարկումների տվյալների, գրունտային ջրերի հորիզոններ չեն հայտնաբերվել, ինչը պայմանավորված է բազալտների, ինչպես նաև դրանց հիմնատակող հրաբխային խարամների խիստ ջրաթափանցելիությամբ: Տեղամասում բնական աղբյուրներ չկան:

Տեղամասում ջրային ռեսուրսների բացակայությամբ պայմանավորված՝ ջրային ռեսուրսների աղտոտվածության վերաբերյալ տվյալներ չեն կարող ներկայացվել:

3.8. Հողային ռեսուրսներ

Արամուսի բազալտների Արմենիու-2 տեղամասի շրջանում զարգացած են հիմնականում լեռնաշագանակագույն հողերը, որոնց ենթատիպերի տարածումը ներկայացված է ստորև նկար 10-ում : Նախալեռնային գոտում տարածված են շագանակագույն, մեծ մասամբ քարքարոտ, էրոզացված հողերը, որոնց մակերեսային քարքարոտությունը կազմում է 70.3%, որից 18.8%-ը՝ թույլ քարքարոտ, 17.0%՝ միջակ քարքարոտ, 34.5 %-ը՝ ուժեղ քարքարոտ:



Շագանակագույն հողերը ձևավորվել են տիպիկ չոր տափաստանային բուսականության տակ, հրաբխային ապարների հողմահարված նյութերի, ինչպես նաև տեղակուտակ, ողողաբերուկ և հեղեղաբերուկ գոյացումների վրա:

Հայցվող տարածքի սահմաններում տարածված բաց-շագանակագույն մանրախճաքարքարոտ կարբոնատային-ցեմենտացված հողերի կլանման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է հումուսի սակավ պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:

Հողերի ծավալային զանգվածը 1.35գ/սմ³-ի, տեսակարար զանգվածը՝ 2.13գ/սմ³-ի, ընդհանուր ծակոտկենությունը՝ 36.4%, խոնավությունը՝ 27%-ի սահմաններում: Հողերը պարունակում են մեծ քանակությամբ կարբոնատներ՝ մինչև 17.4%, որն առաջ է բերում հողերի ցեմենտացիա և քարացում: Հողը և փխրուկաբեկորային մայրատեսակը հարուստ են հողալկալի մետաղներով, ֆոսֆորական թթվով և կալիումով: Անմշակ հողերում ստրուկտուրան խոշոր կնձկային է:

Ընդհանրապես հողային ծածկույթի աղտոտման աղբյուրներ կարող են հանդիսանալ՝ մետաղաձուլական գործարանները, արդյունաբերական և կենցաղային թափոնները, ժամանակակից գյուղատնտեսությունը, տրանսպորտը: Մարդու գործունեության արդյունքում միջավայր թափանցած ծանր մետաղների մեծ մասը կուտակվում է հողում: Գյուղատնտեսական աղտոտման հիմնական աղբյուրներն են՝ հանքային պարարտանյութերը, թունաքիմիկատները, անասնապահական համալիրները: Հանքային պարարտանյութերի կանոնների խախտման դեպքում մեծանում է հողի թթվայնությունը, փոխվում է հողային օգտագործման օրգանիզմների տեսակային կազմը, խախտվում է նյութերի շրջապտույտը, քայքայվում է հողի կառուցվածքը:

Տարածքի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ որևէ բաց տեղեկատվություն չկա. այդ տեղեկատվությունը կարող է ստացվել Ընկերության կողմից երկրաբանական ուսումնասիրություն ստանալուց հետո՝ հողերի մշտադիտարկման արդյունքներով: Ընդհանուր տարածքի հողերի աղտոտվածության վերաբերյալ պատկերացում կազմելու համար կարող ենք ներկայացնել հայցվող տարածքի շրջանում կատարված հողերի նմուշառման և ուսումնասիրության արդյունքները՝ ծանր մետաղների և այլ աղտոտիչների պարունակությունները ուսումնասիրելու նպատակով: ՀՀ առողջապահության նախարարի 25.01.2010թ.-ի №01-Ն հրամանի հավելվածի աղյուսակ 1-ում սահմանված աղտոտիչներից հողերում արձանագրվել է 0.12մգ/կգ պղնձի, 0.010մգ/կգ նիկելի և 1.03մգ/կգ ցինկի պարունակություններ:

Տարածքի հողային ծածկույթի աղտոտվածության վերաբերյալ նշենք, որ որևէ գործունեության արդյունքում աղտոտող նյութերի կոնցենտրացիաները չպետք է գերազանցեն ստորև բերվող աղյուսակում նշված տվյալներին:

Հողում քիմիական նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներ
(ՀՀ Առողջապահության նախարարի 2010թ. հունվարի 25-ի N 01-Ն հրաման)

<i>Նյութերի անվանում</i>	<i>Սահմանային թույլատրելի կոնցենտրացիա, գ/կգ</i>
<i>Վանադիում</i>	<i>0,15</i>
<i>Արսեն</i>	<i>0,002</i>
<i>Կապար</i>	<i>0,032</i>
<i>Ծարիր</i>	<i>0,0045</i>
<i>Կոբալտ</i>	<i>0,005</i>
<i>Պղինձ</i>	<i>0,003</i>
<i>Նիկել</i>	<i>0,004</i>
<i>Ցինկ</i>	<i>0,023</i>
<i>Քրոմ</i>	<i>0,006</i>

Հայցվող տարածքի տեսանելի դիտարկումների արդյունքներով՝ խախտված և վերականգնված հողեր, հանված, պահեստավորված, կուտակված հողաբուսական շերտ, լցակույտեր չկան:


3.9. Բուսական և կենդանական աշխարհ

Արամուսի բազալտի Արմենիուս-2 տեղամասի շրջանի բուսական աշխարհը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային զոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները՝ *Festuca valesiaca* Gaudin, *Festuca ovina* L., *Koeleria albovii* Domin, *Koeleria cristata* (L.) Pers, *Stipa capillata* L., *Stipa tirsia* Stev.:

Աճում են նաև օշինդրա-էֆեմերային տեսակներ՝ *Artemisia Fragrans* Willd., *Kochia Prostrata* (L.) Schrad., *Capparis spinosa* Willd., *Ceratoides papposa* Botsch. Et Ikonn., *Atraphaxis spinosa* L., *Rhamnus pallasii* Fisch. Et Mey., *Tanacetum argyrophyllum* (C.Koch)

Tzvel., *Poa bulbosa* L. *Bromus*, *Aegilops*, *Eremopyrum*, *Alyssum*, *Aeluropus littoralis* (Gouan) Parl.:

Ստորև ներկայացված են բուսական հիմնական տիպերի տարածման քարտեզը:



Նկար 11

Հայցվող ընդերքի տեղամասի տարածաշրջանում ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով կատարվել է Կարմիր գրքերի նյութերի վերլուծություն (հիմք՝ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքը <http://www.mnp.am/>:

Ընդհանուր առմամբ հայցվող տեղամասի տարածաշրջանում հայտնի են ՀՀ բույսերի կարմիր գրքում գրանցված հետևյալ տեսակները.

- ականթ դիոսկորեանման (*Acanthus dioscoridis* L.) – կրիտիկական վիճակում գտնվող տեսակ է, հայտնի է մեկ պոպուլյացիա, որը աճում է Հատիս լեռան ստորոտում, տարածքից ավելի քան 8կմ հեռավորության վրա,

- ձագախոտ էգինյան (*Erysimum eginense* Bornm.) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Ջառ գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 6կմ հեռավորության վրա,

- գառնառվույտ լազիստանյան (*Oxytropis lazica* Boiss.) – վտանգված տեսակ է, լոկալիտներից մեկը գտնվում է Հատիս գյուղի մոտ, հայցվող տարածքից մոտ 13կմ հեռավորության վրա:

Շրջանում տարածված են միջին բարձրության լեռնային տափաստաններին բնորոշ կենդանական աշխարհի ներկայացուցիչներ: Կաթնասունները առավել մեծ քանակությամբ ներկայացված են կրծողներով, որոնց մի մասը վարում է ստորգետնյա կենսակերպ: Բազմազան է թռչնաշխարհը, հանդիպում են սպիտակախածի կեռնեխ, լեռնային խաղտտիկ և կիսասպիտակավիզ ճանճորս: Բազմաթիվ տեսակներով ներկայացված են մորեխները (սովորական իտալական մորեխ, ձիուկ, մթնաթև, ծղրիդ): Լայն տարածված են բզեզները և թիթեռները (շաղգամ, կաղամբի ճերմակաթիթեռ): Սողունների և երկկենցաղների ֆաունան աղքատիկ է: Երկկենցաղներից տարածքում հնարավոր է հանդիպել միայն Կանաչ դողոջի (*Bufo viridis*):

Հայցվող տարածքում նախնական դիտարկումների արդյունքներով խոշոր կենդանիների և թռչունների բներ, բնադրավայրեր չեն արձանագրվել: ՀՀ կենդանիների Կարմիր գրքում գրանցված տեսակներից տարածաշրջանում հատնի են.

- Տոնական գնայուկ (*Poecilus festinus*), նեղ սևամարմին (*Laena constricta* Khnzorian) և հայկական սևամարմին (*Armenohelops armeniacus* Nabozhenko) – հազվագյուտ տեսակներ են, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 4.5կմ հեռավորության վրա,

- Ավրորինա դեղնաթիթեռ (*Colias aurorina* Herrich-Schaffer) – խոցելի տեսակ է, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 4.5կմ հեռավորության վրա,

- Սիրիական սխտորագորս (*Pelobates syriacus* Boettger)– խոցելի տեսակ, հանդիպում է Ջրվեժ, Առինջ, Ողջաբերդ գյուղերի շրջակայքում, տեղամասից 4-6կմ հեռավորությունների վրա,

- Երկարատու սցինկ (Eumeces schneideri) – խոցելի տեսակ, հայտնաբերված է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 4.5կմ հեռավորության վրա,
- Ալեքսանդր առագաստաթիթեռ (Papilio alexanor orientalis Romanoff) - խոցելի տեսակ, դիտարկվել է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 4.5կմ հեռավորության վրա,
- Կարելինի մռայլ արջաթիթեռ (Axiopoena karelini Ménétriés) – խոցելի տեսակ, դիտարկվել է Աբովյան քաղաքի շրջակայքում, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,
- Ասիական լայնականջ չղջիկ (Barbastella leucomelas Gretzschmar) - խոցելի տեսակ, դիտարկվել է Աբովյան քաղաքի շրջակայքում, տեղամասից մոտ 5կմ հեռավորության վրա,
- Անդրկովկասյան կապտաթիթեռ (Plebejus transcaucasicus) – վտանգված տեսակ, դիտարկվել է Ջրվեժ գյուղի մոտ, տեղամասից մոտ 4կմ հեռավորության վրա :

Հայցվող տարածքում ՀՀ կենդանիների կարմիր գրքում գրանցված, վերը նշված կենդանական տեսակները հայցվող տարածքում չեն արձանագրվել: Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից թե բույսերի, թե կենդանիների կարմիր գրքերում գրանցված տեսակների աճելա- և ապրելավայրերը գտնվում են Արամուսի հանքավայրի «Արմենիուս-2» երևակման հայցվող տարածքից զգալի հեռավորությունների վրա :


3.10. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

Արամուսի բազալտների «Արմենիուս-2» տեղամասը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների սահմաններում: Բնության հատուկ պահպանվող տարածքներ չկան նաև հայցվող տեղամասին հարակից տարածքներում: Մոտակա հատուկ պահպանվող տարածքը՝ «Էրեբունի» պետական արգելոցը, գտնվում է հայցվող տարածքից ավելի քան 10կմ հեռավորության վրա :

3.11. Անտառային ռեսուրսներ

ՀՀ Կոտայքի մարզում է գտնվում Հրազդանի անտառտնտեսությունը, որը կազմավորվել է 1931 թվականին: Ընդգրկում է 7 անտառպետություններ՝ Մեղրաձորի 7187հա, Ծաղկաձորի 4003հա, Արզականի 8187հա, Բուժականի 1968հա, Արզնիի 2427հա, Երևանի 385հա և Էրեբունու 468հա: Անտառտնտեսության ընդհանուր տարածքը կազմում է 24625հա :

Անտառտնտեսության կազմում ընդգրկված անտառպետությունների և հարակից բնակավայրերի սխեմատիկ քարտեզը ներկայացված է նկար 12-ում :



Նկար 12.

Արամուսի բազալտների «Արմենիու-2» տեղամասի տարածքում և շրջակայքում անտառային տարածքներ չկան : Անտառային հողեր հաշվառված չեն հայցվող տեղամասին հարակից Արամուս, Կամարիս, Զովք բնակավայրերում: Ամենամոտ գտնվող՝ Ջորաղբյուր բնակավայրի անտառային հողերը գտնվում են հայցվող տարածքից 1.7-3.7կմ հեռավորության վրա:

3.12. Բնության հուշարձաններ

Բնության հատուկ պահպանվող տարածքներ են համարվում նաև բնության հուշարձանները: ՀՀ տարածքի բնության հուշարձանների ցանկը հաստատվել է ՀՀ կառավարության 14.08.2008թ.-ի N 967-Ն որոշմամբ, որից Կոտայքի մարզում հաշվառված են հետևյալները.

Հ/Հ	Բնության հուշարձանը	Գտնվելու վայրը
1	2	3
1.	«Անանուն» խզվածքներ	Եղվարդ ավանից հվ, ավազահանքի մոտ
2.	Թագավորանիստ խարամային կոնի պեմզաների և խարամների կոնտակտ	Եղվարդ քաղաքից 3.5 կմ դեպի հարավ
3.	«Թագավորանիստ» խարամային կոն	Եղվարդ ավանից 3 կմ հվ, Աշտարակ տանող խճուղու ձախ կողմում
4.	«Պեռլիտե փիղ» քարե քանդակ	Չարենցավան քաղաքից 2 կմ հվ, քարահանքի մոտ
5.	«Անանուն» բյուրեղային թերթաքարերի ու վերին կավճի կրաքարերի կոնտակտ	Բջնի գյուղի արևմտյան ծայրամասում
6.	«Օակ քար» բնական թունել	Բջնի գյուղի մատույցներում, Հրազդան գետի ձախ ափին
7.	«Բազալտե երգեհոն» սյունաձև բազալտներ	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
8.	«Անանուն» քարայր սյունաձև բազալտներում	Գառնի գյուղից մոտ 1,0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
9.	«Անանուն» լանջային էրոզիա	Ազատ գետի աջակողմյան ափերին
10.	«Անանուն» լավային ծալքեր	Գառնի գյուղից մոտ 1.0 կմ հվ-արլ, Ազատ գետի կիրճում
11.	«Անանուն» խորշեր	Գողթ գյուղից մոտ 3.0 կմ հս-արլ
12.	«Հատիս» հրաբուխ	Զովաշեն գյուղից 2.0 կմ արմ
13.	«Ավազան» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 1.5 կմ հս-արլ
14.	«Կարենիս» հրաբխային գմբեթ	Կարենիս գյուղից 0.5 կմ հս-արլ
15.	«Անանուն» ապարների բնորոշ մերկացում	Նուռնուս գյուղի և Արգելի ՀԷԿ-ի միջև
16.	«Անանուն» օբսիդիանի ելքեր	Ջրաբեր գյուղից մոտ 1.5 կմ հս-արմ, Երևան-Սևան խճուղու աջ կողմում
17.	«Անանուն» քարե կուտակումներ	Քաղսի գյուղի հվ-արմ եզրին,

		Հրագդանի կիրճում
18.	«Գութանասար» հրաբուխ	Ֆանտան գյուղից 3 կմ հվ
19.	«Լեռնահովիտ» քարային կուտակումներ	Ֆանտան գյուղից 4-5 կմ հվ-արլ, «Թեզխարար» գյուղատեղիի մոտ
20.	Չորաղբյուրի (Մանգյուսի) բրածո ֆլորա	գյուղ Չորաղբյուր
21.	«Հաղպրտանք» աղբյուր	Հրագդան քաղաքի Վանատուր (Աթարբեկյան) թաղամասի արլ ծայրամասում, 1.5 կմ հս-արմ, ծ.մ-ից 1755 մ բարձրության վրա
22.	«Համով» աղբյուր	Ակունք գյուղի հվ-արմ ծայրամասում, եկեղեցու մոտ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
23.	«Քաղցր» աղբյուր	Արզնի գյուղից 150 մ հվ-արմ, Հրագդան գետի ձախ ափին, ծ.մ-ից 1300 մ բարձրության վրա
24.	«Չորի» աղբյուր	Գողթ գյուղից 0.3 կմ հս-արլ, Գողթ գետի աջ ափին, ծ.մ-ից 1580 մ բարձրության վրա
25.	«Ավազան» աղբյուր	Կաթնաղբյուր գյուղից 0.3 կմ հս-արլ, ծ.մ-ից 1450 մ բարձրության վրա
26.	«Սագերի» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ հս
27.	«Վիշապա» լիճ	Գեղարդ գյուղից մոտ 4 կմ արլ
28.	«Բազմալիճք» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 3 կմ հս
29.	«Լուսնալիճ» լիճ	Սևաբերդ գյուղից մոտ 7 կմ հս-արլ
30.	«Ողջաբերդ» բնապատմական համալիր	Ողջաբերդ գյուղի հս-արլ մասում
31.	«Ռեիլկտային կրկես Քյորոլի լեռան մոտ»	Արտավազ գյուղի մոտ
32.	«Ալպյան գորգ»	Մեղրաձոր-Ֆիոլետովո գրունտային ճանապարհի ամենաբարձր մասում (Փամբակ լեռնաշղթայի Ամպասարի գագաթային մասում, ծ.մ-ից 300 մ բարձրության վրա)
33.	«Թանթրվենի Տիգրանի»	Արզնի առողջարանի մոտ, Հրագդան գետի ափին, ծ.մ-ից 1350 մ բարձրության վրա

Ինչպես հետևում է ներկայացված տեղեկատվությունից, Արամուսի բազալտի հանքավայրի «Արմենիու-2» տեղամասում, հարակից Արամուս և Կամարիս բնակավայրերում բնության հուշարձաններ հաշվառված չեն:

Բնության մոտակա հուշարձանն է Ձորաղբյուրի բրածո ֆլորան, որը գտնվում է երևակման տարածքից մոտ 2.5կմ հեռավորության վրա:

4. ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

4.1. Ենթակառուցվածքներ

Արամուսի բազալտների հանքավայրի Արմենիուս-2 տեղամասը վարչական առումով ընդգրկված է ՀՀ Կոտայքի մարզի տարածքում:

Ստորև ներկայացվում է Կոտայքի մարզի վերաբերյալ ընդհանուր տվյալներն ըստ ՀՀ Վիճակագրական կոմիտեի և ըստ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայքէջերի տվյալների: Մարզկենտրոնն է Հրազդան քաղաքը:

Տարածքը	2 076 քառ.կմ/
Հայաստանի Հանրապետության տարածքում մարզի տարածքի տեսակարար կշիռը, %	7.0
Համայնքներ, 2023 թ. տարեսկզբի դրությամբ	11
Քաղաքներ	7
Գյուղեր	61
Բնակչության թվաքանակը 2023թ. տարեսկզբի դրությամբ	253.8 հազ.մարդ
այդ թվում՝	
քաղաքային	137.4 հազ.մարդ
գյուղական	116.4 հազ.մարդ
Հայաստանի Հանրապետության բնակչության ընդհանուր թվաքանակում մարզի բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,%	8.5
Քաղաքային բնակչության թվաքանակի տեսակարար կշիռը 2022թ.,%	54.1
Գյուղատնտեսական նշանակության հողեր	153 856.0 հա
այդ թվում՝ վարելահողեր	36 771.2 հա

Կոտայքի մարզի պատմական, աշխարհագրական տվյալները

Կոտայքի մարզն իր մեջ ընդգրկում է Հրազդանի, Աբովյանի և Նաիրիի նախկին վարչական շրջանները: Վարչատարածքային միավորը զբաղեցնում է պատմական

Հայաստանի Այրարատ նահանգի Կոտայք, Մազազ, Նիգ, Վարաժնունիք, Արագածոտն գավառների մի մասը:

Կոտայքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական մասում, ծովի մակերեսույթից մոտ 1100-3100մ բարձրության վրա: Տարածքն ընդգրկում է Հրազդան գետի վերին և միջին ավազանն ու Մարմարիկ գետի ավազանն ամբողջությամբ: Հյուսիսից սահմանափակվում է Գուրանասար, իսկ հյուսիս-արևելքից՝ Հատիսի լեռնազանգվածներով: Հարավ-արևմուտքում աստիճանաբար ցածրանալով՝ ձուլվում է Արարատյան դաշտին: Կոտայքի սարավանդն ընկած է Հրազդան գետի միջին հոսանքի ձախափնյա մասից մինչև Գեղամա լեռների արևմտյան ստորոտը: Հրազդան գետի ձախակողմյան վտակների մի մասը գետնի տակ ներծծված ջրերի շնորհիվ զարնանը դուրս են ցայտում /շատ լինելու պատճառով դրանց անվանում են «40 աղբյուր»): Կոտայքով են հոսում նաև Գետառն ու Ազատը, որոնք ունեն ոռոգիչ նշանակություն: Ոռոգման համակարգում մեծ նշանակություն ունի Ակնա լիճը (3032մ. բարձրություն), որով ջրարբիացվում են ամառային արոտավայրերը: Հիմնական լեռնագրական միավորներն են Կոտայքի և Եղվարդի բլրաալիքային սարավանդները, Մարմարիկի վտակներով կտրտված Փամբակի լեռնաշղթայի լանջերը, Գեղամա լեռնաշղթայի լեռնաճյուղերն ու լավային հոսքերը: Տիրապետող են կիսաանապատային, լեռնատափաստանային լանդշաֆտները՝ համապատասխան բուսական և կենդանական աշխարհներով: Կլիմայական գոտին խառն է, իսկ աշխարհագրական դիրքն, ընդհանուր առմամբ, նպաստավոր : Մարզի տարածքով են անցնում Երևան-Շորժա և Հրազդան-Իջևան երկաթուղիները, իսկ մարզկենտրոնից մինչև մայրաքաղաք ընդամենը 45 կմ է: Ազգաբնակչության 97,6 %-ը հայեր են: Ազգային փոքրամասնությունները հիմնականում բաշխվում են հետևյալ կերպ՝ եզդիներ, ասորիներ, ռուսներ, քրդեր:

Կոտայքի մարզը գտնվում է ՀՀ տարածքի կենտրոնում և միակ մարզն է, որը միջպետական սահման չունի ՀՀ հարևան որևէ պետության հետ: Այն հարավ-արևմուտքից սահմանակից է մայրաքաղաքին, արևմուտքից՝ Արագածոտնի, հյուսիսից՝ Լոռու, հյուսիս-արևելքից՝ Տավուշի, արևելքից՝ Գեղարքունիքի և հարավից՝ Արարատի մարզերին:

Մոզիայ-տնտեսական նկարագիր

Մարզի մշտական բնակչության 48.2%-ը կազմում են տղամարդիկ, 51.8%-ը՝ կանայք: Մարզի բնակչության մեջ գերակշռում են 30-62 տարեկանները (44.8 %), ընդ որում տղամարդիկ կազմում են 43.4%, կանայք՝ 46.1%, իսկ երիտասարդները (15-29 տարեկան) կազմում են ազգաբնակչության 23.3%-ը, համապատասխանաբար՝ տղամարդիկ՝ 24.3 %, կանայք՝ 22.4 %:

Կոտայքի մարզի բնակչության կրթական մակարդակն ունի հետևյալ պատկերը՝ բարձրագույն կրթություն ունեցողներ՝ 15,6%, միջին մասնագիտական՝ 15,6%, նախնական մասնագիտական՝ 4,5%, միջնակարգ՝ 37,6%, հիմնական՝ 12,5%, տարրական՝ 8,7% և չունի տարրական կրթություն՝ 5,5%: Քաղաքներում գյուղերի համեմատաբար բարձր է բարձրագույն կրթության մակարդակը՝ 66%-ով, միջին մասնագիտական կրթության մակարդակը՝ 60%-ով:

2022թ.-ին մարզի տնտեսության հիմնական ոլորտների տեսակարար կշիռները ՀՀ տնտեսության համապատասխան ոլորտների ընդհանուր ծավալում կազմել են.

- արդյունաբերություն 11.2 %,
- գյուղատնտեսություն 8.5 %,
- շինարարություն 12.8 %,
- մանրածախ առևտուր 4.8 %,
- ծառայություններ 3.1 %:

Կոտայքի մարզը համեմատաբար զարգացած ու բազմաճյուղ տնտեսություն ունեցող մարզերից է:

Մարզի տնտեսության ընդհանուր ծավալում գերակշռողն արդյունաբերությունն է: Մարզը մեծ դեր ունի էներգետիկայի ոլորտում:

Մարզի արդյունաբերության մյուս հիմնական ուղղությունը մշակող արդյունաբերությունն է, որի մեջ առավել զարգացած են հետևյալ ոլորտները.

ա) սննդամթերքի և խմիչքների արտադրություն (մսի և մսամթերքի մշակում և պահածոյացում, մրգերի և բանջարեղենի մշակում և պահածոյացում, կաթնամթերքի, այլուրի, խմիչքների արտադրություն, ծխախոտ-տային արտադրատեսակների արտադրություն),

բ) ոչ մետաղական հանքային այլ արտադրատեսակների արտադրություն (ապակու և ապակե արտադրատեսակների արտադրություն, ցեմենտի արտադրություն),

գ) հիմնական մետաղների արտադրություն, (թուջի, պողպատի և ֆեռոհամահալվածքների արտադրություն),

դ) ոսկերչական արտադրատեսակների, ոչ թանկարժեք զարդերի արտադրություն:

Ընդերք, բնական ռեսուրսներ

Մարզը հարուստ է օգտակար հանածոների՝ ոսկու, այլումինի, երկաթի, պերլիտի, մարմարի, գրանիտի, լիտոիդային պեմզայի, նեֆելենային սիենիտների, անդեզիտի, հրաբխային խարամների, բազալտի, քարաղի, զանազան շինարարական նյութերի և հանքային ջրերի 3 խոշոր հանքավայրերով (Հանքավան, Բջնի, Արզնի): Երկրաբանահետախուզական աշխատանքներ են կատարվում բազմամետաղային, ոսկու պղինձ-մոլիբդենի, բազալտների, լիթոիդային պեմզաների և այլ օգտակար հանածոների պաշարների հաստատման և վերագնահատման ուղղությամբ: Զգալի են ջրային ռեսուրսների պաշարները (Գառնիի, Կաթնաղբյուրի, Սուլակի, Ալափարսի, Նուռնուսի, Արզականի, Գյումուշի, Մաքրավանի քաղցրահամ ջրերի աղբյուրներ), որոնք խմելու ջրով ապահովում են ոչ միայն մարզի բնակավայրերը, այլ նաև Երևան քաղաքը:

Գյուղատնտեսություն

Մարզում առկա հողային ռեսուրսներ՝ 209303 հա, *այդ թվում՝*

Վարելահողեր -37204 հա

Պտղատու այգիներ -4344 հա

Խաղողի այգիներ -169.7 հա

Խոտհարքեր -10834 հա

Արոտավայրեր -53935 հա

Ոռոգելի հողատարածքներ -18.591 հա

Մարզում գործում են 36125 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններ: Անասնաբուծությունն ու բուսաբուծությունը մարզի գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից են: Մարզում են գործում հանրապետության 3 խոշոր՝ Լուսակերտի, Արզնու և Գետամեջի թռչնաֆաբրիկաները: Մարզում գործող անասնապահական մթերքների արտադրության վերամշակմամբ զբաղվող ձեռնարկությունների գործունեությունում արտադրանքի աճի հետ մեկտեղ զգալի ավելացել են որակյալ և մրցունակ ապրանքները մի շարք ընկերությունների («Արզնի թռչնաֆաբրիկա», «Արտաշես» ՍՊԸ, «Լուսակերտ» թռչնաֆաբրիկա, «Սավա» ՍՊԸ որոշ արտադրատեսակներ (պանիր, մուրաբաներ, ձու) արտահանվում է հաջողությամբ իրացվում են արտերկրում:

Մարզի անտառային տարածքները կազմում են 22969 հա, որոնք պատկանում են ՀՀ «Հայանտառ» ՊՈԱԿ «Հրազդանի անտառտնտեսություն» մասնաճյուղին՝ 22564 հա և ՀՀ Բնապահպանության նախարարության «Արզելոցապարկային համալիր» ՊՈԱԿ-ին՝ 405հա: Մարզի անտառները լեռնային են, ունեն ընդգծված հողապաշտպան, ջրապաշտպան և կլիմայակարգավորիչ նշանակություն, ինչպես նաև աչքի են ընկնում բուսական տեսակների բազմազանությամբ: Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների (այդ թվում՝ արգելավայրեր, բնության հուշարձաններ) 2.6 %-ը (8694.3 հա) գտնվում է Կոտայքի մարզում, որը կազմում է մարզի տարածքի շուրջ 4.2%-ը:

Ճանապարհաշինություն

Բեռնաուղևորափոխադրումները մարզում իրականացվում են ավտոմոբիլային, երկաթուղային տրանսպորտով և էլեկտրատրանսպորտով:

Մարզի տարածքի կենտրոնական մասով անցնում են երկրի համար առանցքային նշանակություն ունեցող Երևան–Հրազդան-Սևան ավտոմայրուղին և Երևան-Հրազդան-Իջևան երկաթգիծը:

Կոտայքի մարզի ընդհանուր օգտագործման ավտոճանապարհային ցանցի երկարությունը կազմում է 598,9 կմ, որից

Միջպետական նշանակության - 56.18 կմ

Հանրապետական նշանակության - 274.8 կմ

Մարզային (տեղական) նշանակության - 250.3 կմ

Կոտայքի մարզում բնական աղետներից առավել վտանգ են ներկայացնում երկրաշարժերը, սողանքները, սելավները, գարնանային վարարումների հետևանքով առաջացած ջրհեղեղները, քարաթափվածքները, ուժեղ քամիները, կարկուտը, ցրտահարությունը, մերկասառույցը, ձնաբուքը, մառախուղը, երաշտները և անտառային հրդեհները: Մարզի տարածքում ավտոճանապարհներին սպառնացող քարաթափումները գտնվում են Երևան-Սևան մայրուղու 37-րդ կմ, Հրազդան-Բջնի, Չարենցավան-Արգել, Արզնի-Նոր Գեղի, Ողջաբերդ-Գառնի-Գեղարդ հատվածներում, առկա սողանքային գոտիներից առավել ակտիվ և վտանգավոր գոտիները գտնվում են հիմնականում Ողջաբերդի, Հացավանի, Հանքավանի տարածքներում:

Տրանսպորտ

Մարզի ավտոճանապարհներին զգալի է նաև տարանցիկ երթուղիների թիվը: Մարզում բեռնափոխադրումները և ուղևորափոխադրումները հիմնականում իրականացվում են ավտոմոբիլային և երկաթուղային տրանսպորտի միջոցով: Ավտոմոբիլային փոխադրումները մարզում կազմում են ընդհանուր փոխադրումների շուրջ 95%-ը, ինչով և պայմանավորված է ավտոմոբիլային ճանապարհների գերակա դերը տնտեսությունում:

Մարզում գործում են ավտոբուսային և միկրոավտոբուսային 38 ներմարզային երթուղիներ, որոնցում շահագործման են ընդգրկված շուրջ 115 տրանսպորտային միջոցներ:

Մարզում բնակվող ազգային փոքրամասնություններ

Մարզի 42 համայնքներում բնակվում են ռուս, եզդի, քուրդ, ասորի, հույն և այլ ազգերի ներկայացուցիչներ:

Կապ և այլ ենթակառուցվածքներ

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապը և շարժական ինտերնետ կապը ապահովվում է հանրապետություն գործող բոլոր օպերատորների կողմից: Մարզի բնակավայրերը 100%-ով ապահովված են ինտերնետ ծածկույթով: Ինտերնետի որակը հիմնականում բավարար է:

Մարզում լարային հեռախոսակապ ապահովում են Թիմը և Ռոստելեկոմը՝ 48 համայնքներում: Մարզի բնակավայրերում գործում են «Հայփոստ» ՓԲԸ-ի 66 փոստային բաժանմունքներ:

Մարզի բոլոր համայնքների բնակչությունը հնարավորություն ունի բավարար որակով ընդունելու 10-ից ավելի հեռուստատեսություն: Մարզի ամբողջ տարածքն ընդգրկված է թվային հեռուստահաղորդումների ծածկույթում: Հեռարձակվում է նաև Հանրային ռադիոն, որը հասանելի է մարզի բոլոր բնակավայրերում:

Մարզի համայնքներում ջրամատակարարումն իրականացվում է բաց աղբյուրներից, կապտաժներից՝ ինքնահոս և մեխանիկական եղանակներով: Չնայած կատարված աշխատանքներին, կան դեռևս լուծում պահանջող հիմնախնդիրներ՝ Լեռնանիստ համայնքը չունի ջրամատակարարման ցանց:

Մարզի 29 համայնքներում գոյություն ունեն կոյուղու հեռացման գործող համակարգեր, որոնք սպասարկում են մարզի բնակչության 53%-ին: Ներկայումս մարզի կոյուղու համակարգ ունեցող բոլոր բնակավայրերի կոյուղագծերը գտնվում են անմխիթար վիճակում և միացված են հոսող գետերին, ջրամբարներին:

Հրագդանի տարածաշրջանում առկա է կեղտաջրերի մաքրման չգործող կայան, որը մինչև 1992թ-ը իրականացրել է Ծաղկաձորի, Հանքավանի և Հրագդանի կոյուղաջրերի կենսաբանական մաքրում:

Մարզով են անցնում մագիստրալ գազատարեր, առկա են գազի ստորգետնյա պահեստարաններ: Գազաֆիկացված բնակավայրերում ապրում է մարզիբնակչության 98,6%-ը: Կոտայքի մարզի գազի բաշխիչ ցանցի միագիծ երկարությունը կազմում է ավելի քան 1060 կմ:

4.2. Հողերի տնտեսական յուրացման բնութագիր

Արամուսի բազալտները Արմենիուս-2 տեղամասի տարածքը ներառված է Արուսյան խոշորացված համայնքի Արամուս բնակավայրի վարչական տարածքում:

Բնակավայրը գտնվում է ծովի մակերևույթից 1420մ բարձրության վրա, հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 21կմ, հեռավորությունը մարզկենտրոնից՝ 42 կմ: Արամուս բնակավայրի վարչական տարածքը կազմում է 1499.11 հա, որից գյուղատնտեսական նշանակություն ունեն 1075.85 հա-ը, բնակավայրերը զբաղեցնում են 238.15 հա, արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտները՝ 101.37 հա, էներգետիկայի, տրանսպորտի, կապի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտները՝ 16.67 հա, հատուկ պահպանվող տարածքները՝ 53.50 հա, ջրային հողերը՝ 13.57 հա, պետական սեփականություն հանդիսացող հողերը՝ 78 հա:

Ըստ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ Արամուսի բնակչությունը 2023թ. հունվարի 1-ի դրությամբ կազմում է 3988մարդ, որից 52% կազմում են տղամարդիկ և 48%՝ կանայք:

Գյուղում գործում են ալկոհոլային խմիչքների, սնկերի, սննդամթերքի, քարի մշակման, հանքարդյունահանման և արտադրական կազմակերպություններ: Անհատ ձեռնարկատերերի կողմից կազմակերպվում են հացի և թարմ այլուրե հրուշակեղենի, մետաղապլաստե դռների ու լուսամուտների և այլ արտադրություններ: Գործում է թոչնաբուժական ֆաբրիկա: Արտադրված արտադրանքի սպառման հիմնական շուկան Հայաստանի Հանրապետությունն է: Բնակավայրում զարգանում են առևտրի և սպասարկման փոքր և միջին կայուն ձևերը: Բնակչության հիմնական զբաղմունքը

գյուղատնտեսությունը, անասնապահությունը, արտադրությունը, մատուցվող ծառայություններն ու առևտուրն է:

Բնակավայրում գործում են՝ 1 դպրոց, 1 մանկապարտեզ, 1 մշակույթի տուն, 2 երաժշտական դպրոց: Արամուսում գործում է «Արամուսի մարզամշակույթային կենտրոն»-ը:

4.3. Պատմության և մշակութային հուշարձաններ

ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N1793-Ն և 2007 թվականի մարտի 15-ի թիվ 385-Ն որոշումներով հաստատվել է ՀՀ Կոտայքի մարզի պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակը: Ցանկում ներառված է ընդամենը 34 հուշարձան (11 միավոր):

Արամուս բնակավայրի տարածքում նշված են պատմության և մշակույթի հետևյալ հուշարձանները:

հուշարձան	Ժամանակաշրջանը	վայր, հասցե
Ամրոց-բնակատեղի	Ք.ա. 2 հազ.- 2 դ.	գյուղից 1 կմ հվ-ամ
Դամբարանադաշտ	Ք.ա. 2 հազ.- 8 դ.	բլրալանջին
Գերեզմանոց	12-20 դդ.	գյուղի հվ-աե մասում
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	12-13 դդ.	
Խաչքար	13-14 դդ.	
Խաչքար	16-17 դդ.	
Խաչքար	16-17 դդ.	
Տապանաքար	15-16 դդ.	
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 0.5 կմ հվ-աե
Դամբարանադաշտ	Ք.ա. 2-1 հազ.	գյուղից 0.5 կմ աե
Եկեղեցի Սբ. Նշան Ծիրանավոր	6 դ.	գյուղի մեջ

հուշարձան	Ժամանակաշրջանը	վայր, հասցե
Բնակելի շինություններ	19 դ.	Եկեղեցու մոտ
Խաչքար	10-11 դդ.	Եկեղեցու մոտ
Խաչքար	10-11 դդ.	
Եկեղեցի Սբ. Հակոբ	1867 թ.	գյուղի կենտրոնում
Խաչքար	9-10 դդ.	հենած է եկեղեցու պատին
Խաչքար	13 դ.	ազուցված է եկեղեցու ան ճակատին
Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու ան ճակատին
Խաչքար	13-14 դդ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին
Խաչքար	14-15 դդ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին
Խաչքար	14-15 դդ.	ազուցված է եկեղեցու ամ ճակատին
Խաչքար	14-15 դդ.	խորանի ձախ կողմում
Խաչքար	15 դ.	ազուցված է եկեղեցու ան ճակատին
Խաչքար	15-16 դդ.	
Խաչքար	1558 թ.	ազուցված է եկեղեցու ան պատի հս մասում
Խաչքար	16-17 դդ.	ազուցված է եկեղեցու ան պատի հս մասում
Հուշարձան Երկրորդ աշխարհամարտում զոհվածների	1972 թ.	գյուղի մեջ
Մատուռ Սբ. Աստվածածին	13-14 դդ.	գյուղի հվ-ան մասում, բարձունքի վրա
Գերեզմանոց	13-20 դդ.	
Խաչքար Գրիգոր քահանայի, կազմող՝ Վարդ	1205 թ.	Եկեղեցու հս ճակատի դիմաց
Մատուռ	19 դ.	գյուղի կենտրոնում
Մատուռ	19 դ.	գյուղի ամ կողմում
Տապանաքար	12-13 դդ.	գյուղի ամ կողմում

Հայցվող տարածքի և պատմության, մշակույթի հուշարձանների տարածքների միջև հեռավորությունը կազմում է նվազագույնը 1.0կմ: Հուշարձանների տեղադիրքերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ծրագրի իրականացման տարածքի հետ այս հուշարձանները որևէ անչություն չունեն և որևէ կերպ ազեցություն կրել չեն կարող:

Երկրաբանական ուսումնասիրության համար հայցվող տարածքում, այնպես էլ դրա սահմաններին մոտ (նվազագույնը 1.0կմ) պատմամշակութային հուշարձաններ և հնագիտական արժեքներ հայտնի չեն:

4.4 Տեղեկատվություն հանրության ծանուցման, հանրային լսումների և տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնության վերաբերյալ

Արամուսի բազալտների Արմենիուս-2 տեղամասի ուսումնասիրության աշխատանքների ծրագիրը և դրա շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման մոտեցումները ներկայացվել է ազդակիր համայնքի բնակիչներին:

Ընկերության ներկայացուցիչների կողմից հնարավորինս մանրամասնորեն տրվել է նախատեսվող գործունեության բնութագիրը՝ երկրաբանական ուսումնասիրության դաշտային հիմնական աշխատանքները, օգտագործվող բնական ռեսուրսները ու նյութերը, տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, քննարկվել է շարունակվող աշխատանքներում բնակիչների ներգրավման հարցը:

Ազդակիր համայնքի բնակիչները ընդհանուր առմամբ դրական են վերաբերվել նախատեսվող գործունեությանը: Ընկերության ներկայացրած նախատեսվող գործունեության վերաբերյալ ստացվել է տեղական ինքնակառավարման մարմինների նախնական համաձայնությունը:

Այս պայմաններում հանքարդյունաբերության զարգացումը կարող է որոշակի դերակատարում ունենալ տնտեսական զարգացման գործընթացում: Սակայն դա հնարավոր է միայն հարակից համայնքների բնական միջավայրին չվնասելու պայմանով:

5.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՊՈՏԵՆՑԻԱԼ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՄՎՈՂ

ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Արամուսի բազալտների Արմենիու-2 տեղամասի ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում որոշակի ազդեցություններ են դրսևորվելու մթնոլորտի, ջրային ռեսուրսների, կենսաբազմազանության վրա:

Մթնոլորտային օդ.

Մեքենաների տեղաշարժի, մակերևութային հետախուզական փորվածքների անցման և հորատանցքերի հորատման ժամանակ տեղի է ունենալու վնասակար գազերի աննշան արտանետում: Փոշեզոյացում կարող է լինել շատ փոքր՝ կապված տրանսպորտի շարժի հետ: Ընդամենը մոտ 10 օրվա տևողությամբ դաշտային աշխատանքները կարելի է կազմակերպել խոնավ եղանակին և ավտոտրանսպորտի շարժով փոշի չառաջացնել: Բուն տեղամասում հորատման ժամանակ ևս փոշեառաջացում չի լինի:

Աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը առաջնորդվելու է ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ, համաձայն որի ածխածնի օքսիդի, ազոտի օքսիդի (երկօքսիդի հաշվարկով), մրի և ծծմբային անհիդրիդի սահմանային թույլատրելի խտությունները (ՍԹԿ) համապատասխանաբար կազմում է 0.8 մգ/մ³, 0.015 մգ/մ³, 0.3 մգ/մ³ և 0.05 մգ/մ³:

Նախնական հաշվարկների համաձայն, երևակման տարածքում վնասակար գազերի (ազոտի օքսիդ, ածխածնի երկօքսիդ, մուր) առավելագույն կոնցենտրացիաները չեն գերազանցելու նորմատիվային փաստաթղթերով ամրագրված սահմանային թույլատրելի խտությունները:

Մանիտարա - պաշտպանիչ գոտի (ՄՊԳ)

Համաձայն ՀՀՇՆ 31-04.01-2024 «Արտադրական և հասարակական նշանակության շենքերի ու շինությունների սանիտարապաշտպանական գոտիներ և սանիտարական դասակարգում» շինարարական նորմերի՝ ոչմետաղական հանքերի համար ՄՊԳ-ն կազմում է 100մ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մոտակա բնակավայրը գտնվում է նվազագույնը 1.0կմ հեռավորության վրա, հատուկ միջոցառումներ ՄՊԳ կազմակերպման նպատակով չեն նախատեսվում:

Ջրային ավազան.

Ջրային ռեսուրսների աղտոտում տեղի չի ունենա, քանի որ տեղամասի տարածքում մակերևութային ջրային հոսքեր չկան, իսկ երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիայով արտահոսքեր չեն նախատեսվում: Հորատմանն անհրաժեշտ ջրամատակարարման կազմակերպումը կիրականացվի հորատման ծառայություն մատուցող ընկերության կողմից, ըստ անհրաժեշտության տարածք կբերվի բաքերով՝ ջրօգտագործման թույլտվություն ունեցող որևէ ընկերության միջոցով: Աշխատանքների ընթացքում ջրային ավազանի աղտոտում չի սպասվում. ջուրը կօգտագործվի շրջանառու փակ համակարգով:

Հողային ծածկույթ.

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում հողերի աղտոտման կանխարգելման, ինչպես նաև լեռնային փորվածքներով խաթարված տարածքների ռեկուլտիվացման համար անհրաժեշտ է իրականացնել որոշակի միջոցառումներ: Երկրաբանական աշխատանքների ընթացքում հողերի աղտոտում չի լինելու: Երկրաբանական աշխատանքների ընթացքում հողերի աղտոտման կանխարգելման, ինչպես նաև լեռնային փորվածքներով խաթարված տարածքների վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումները ընկերության կողմից կձեռնարկվեն անհապաղ:

Փորձնական բացահանքի անցման արդյունքում խախտվելու է տարածքի մակերևույթը : Ընդհանուր մոտ 40մ² մակերեսով բացահանքի անցման ժամանակ այդ տարածքից տեղահանվելու է հողաբուսաշերտ (մոտ 10 սմ հզորությամբ):

Հողաբուսական շերտը փորվածքի մակերեսից կհեռացվի և փորվածքի մի կողմում կտեղադրվի հանված մակաբացման ապարներից և օգտակար հանածոյից առանձին: Դա կօգտագործվի բացահանքի ռեկուլտիվացման համար:

Բացահանքից հեռացված մինչև 2մ հզորության մակաբացման փուխր ապարների և մինչև 1 մ հզորության հողմահարման շերտի (ընդհանուր մոտ 3մ) զանգվածը ենթակա է հետ վերադարձման արդյունահանված տարածք և պետք է կատարվի այդ զանգվածի ամրացում-նստեցում: Նոր ճանապարհների շինարարություն չի նախատեսվում, օգտագործվելու են գոյություն ունեցող դաշտամիջյան ճանապարհները:

Հողաբուսական շերտի վերականգնման ենթակա ընդհանուր մակերեսը կկազմի մոտ 40մ, իսկ հողաբուսաշերտի ծավալը կկազմի՝ $40\text{մ}^2 \times 10\text{սմ} = 4\text{մ}^3$:

Հողի բերրի շերտի հանման նորմերի որոշման, պահպանման, նպատակային և արդյունավետ օգտագործման հարցերով ընկերությունն առաջնորդվելու է ՀՀ կառավարության 02.11.2017թ.-ի N1404-Ն և 2011թ-ի սեպտեմբերի 8-ի N1396-Ն որոշումներով սահմանված պահանջներով: Բացահանքի անցման և հետլցման ժամկետը նախատեսվում է մինչև 5-10 օր, ուստի հողի բերրի շերտը, որը հանվել և կուտակվել է փորվածքի անմիջական հարևանությամբ՝ առանձին, այդ կարճ ժամանակահատվածում պահպանման լրացուցիչ միջոցառումների կարիք չի ունենա:

Նախագծով նախատեսվում է խախտված հողերի լեռնատեխնիկական վերականգնման միջոցառումներ՝ բացահանքի լցում, նույն տեղից հանված հողաբուսային շերտով ծածկում, հարթեցում և ամրացում և կենսաբանական վերականգնման միջոցառումներ: Ռեկուլտիվացման աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկումն իրականացվել է ՀՀ Կառավարության 18.08.2021թ. թիվ 1352-Ն որոշումով սահմանված կարգով:

ՌԵԿՈՒՆԸՄԻՎԱՑԻՈՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎԱՑԻՆ ԱՐԺԵՔԻ ՀԱՇՎԱՐԿ

Տեխնիկական վերականգնման աշխատանքների արժեքի կառուցվածքը ներկայացվում է հետևյալ բանաձևով՝

$$U = \sum \bar{\sigma} + \bar{\tau} + Z + \bar{\sigma}_n + \bar{\sigma}_f$$

որտեղ՝

Ա – աշխատանքների արժեքն է

ΣԾ – ռեկուլտիվացիոն աշխատանքների բոլոր միջոցառումների ծախսերի հանրագումարն է

Շ – ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսված շահույթն է

Հ – ռեկուլտիվացիոն աշխատանքների կատարման համար նախատեսված հարկերն են

Ծ_ն – ռեկուլտիվացիոն աշխատանքների նախագծման ծախսերն են

Ծ_մ – ռեկուլտիվացիոն աշխատանքների մեղմացման միջոցառումների ծախսերն են:

Աշխատանքների արժեքի մեջ մտնող բոլոր միջոցառումների ծախսերը, ելնելով շինարարական և այլ նորմաներից, խմբավորվում են հետևյալ կառուցվածքով՝

$$\Sigma \text{Ծ} = \text{ՈԻԾ} + \text{ԱԾ} + \text{Ա}_\delta$$

որտեղ՝

ՈԻԾ – ուղղակի ծախսերն են

ԱԾ – անուղղակի ծախսերն են

Ա_δ – այլ ծախսերն են:

$$\text{ՈԻԾ} = \text{Ա}_2 + \text{Ն} + \text{Մ}$$

որտեղ՝

Ա₂ - հողերի ռեկուլտիվացման աշխատանքների հիմնական բանվորների աշխատավարձն է

Ն - նյութերի, կառուցվածքների և պատրաստվածքների արժեքն է

Մ - մեքենաների, մեխանիզմների շահագործման ծախսերն են

1. Աշխատավարձ

$$Ա_2 = S \times \Gamma \times \Phi$$

S - աշխատատարությունը, մարդ/ժամ – 40մ² (ամբողջ ծավալը) : 4մ² (միավոր աշխատաժամի նորմը) = 10 մարդ/ժամ կամ 2 մարդ/օր: Նախատեսվում է աշխատանքներում ներգրավել 2 մարդ:

Γ – մեկ ժամվա դրույքը – (90հազ. դրամ : 173.1 = 520 դրամ)

Φ – պայմանները հաշվի առնող գործակից – 1.3

$$Ա_2 = 10 \text{ մարդ/ժամ} \times 520 \text{ դրամ} \times 1.3 = 6760 \text{ դրամ}$$

2. Նյութերի արժեքը

$$\text{Մետաղյա բահ} - 2 \text{ հատ} \times 1000 \text{ դրամ} = 2000 \text{ դրամ}$$

3. Մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեք

Մ-աշխատանքների տեխնիկական փուլի մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքն է:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է մեկ մարդատար մեքենա 1 օր տևողությամբ:

Մ = Ժ x Ա, որտեղ Մ - մեքենայի շահագործման արժեքն է, Ժ – մեքենային աշխատանքի ժամանակը (8 ժամ), Ա – մեկ մեքենա/ժամի արժեքը (1200դրամ)

$$Մ = 8 \text{ ժամ} \times 1200 \text{ դրամ} = 9600 \text{ դրամ}$$

4. Անուղղակի ծախսեր

$$Ա\text{Ծ} = \text{ՈԻԾ} \times 5.3\% = (6760 \text{ դրամ} + 2000 \text{ դրամ} + 9600 \text{ դրամ}) \times 5.3\% = 18360 \times 5.3\% = 973 \text{ դրամ}$$

5. Շահույթ

$$\text{Շ} = (\text{ՈԻԾ} + Ա\text{Ծ}) \times 10\% = (18360 \text{ դրամ} + 973 \text{ դրամ}) \times 10\% = 1933 \text{ դրամ}$$

6. Այլ ծախսեր

$$U = \sigma + \varrho + L$$

Տվյալ աշխատանքների կատարումը այլ ծախսեր չի նախատեսում:

Կենսաբանական վերականգնման ծախսեր

Հարթեցումից հետո կատարվում է փխրուն ապարների պարարտացում բնական օրգանական պարարտանյութերով՝ հայկական ORWAKO ընկերության արտադրության կենսահումուսով, այնուհետև՝ տարածքին բնորոշ բուսատեսակների սերմերի ցանք:

1. Աշխատավարձ

$$U_2 = S \times \Gamma \times \Phi$$

S - աշխատատարությունը, մարդ/ժամ – 40մ² (ամբողջ ծավալը) : 20մ² (միավոր աշխատաժամի նորմը) = 2մարդ/ժամ: Նախատեսվում է աշխատանքներում ներգրավել 1 մարդ:

Γ – մեկ ժամվա դրույքը – (250հազ. դրամ : 173.1 = 1444 դրամ)

Φ – պայմանները հաշվի առնող գործակից – 1.3

$$U_2 = 2\text{մարդ/ժամ} \times 1444\text{դրամ} \times 1.3 = 3755 \text{ դրամ}$$

2. Նյութերի արժեքը

Մետաղյա փոցիս – 1 հատ x 2000դրամ = 2 000դրամ

Մերմ-1կգ x 2000դրամ = 2 000դրամ

Պարարտանյութ-10կգ x 120դրամ = 1200դրամ,

Նյութերի ընդհանուր արժեքը՝ 5200դրամ:

3. Մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեք

Մ-աշխատանքների կենսաբանական փուլի մեքենաների և մեխանիզմների շահագործման արժեքն է:

Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է մեկ մարդատար մեքենա 12 օր տևողությամբ:

Մ = σ x Ա, որտեղ Մ - մեքենայի շահագործման արժեքն է, σ – մեքենայի աշխատանքի ժամանակը (2 ժամ), Ա – մեկ մեքենա/ժամի արժեքը (1200դրամ)

$$M = 2\text{ժամ} \times 1200\text{դրամ} = 2400\text{դրամ}$$

4. Անուղղակի ծախսեր

$$ԱԾ = ՈԻԾ \times 5.3\% = (3755\text{դրամ} + 5200\text{դրամ} + 2400\text{դրամ}) \times 5.3\% = 602\text{դրամ}$$

5. Շահույթ

$$5. \text{ Շահույթ } \tau = (\text{ՈԻԾ} + \text{ԱԾ}) \times 10\% = (11355\text{դրամ} + 602 \text{ դրամ}) \times 10\% = 1195\text{դրամ}$$

$$6. \text{ Այլ ծախսեր } \alpha = \sigma + \rho + \lambda,$$

Տվյալ աշխատանքների կատարումը այլ ծախսեր չի նախատեսում:

Ձև N1

Ընդերքօգտագործողը՝ Ա.Ա.Բ. ՊՐՈՆԵԿՏ ՍՊԸ

Ռեկուլտիվացիոն աշխատանքների անվանումը և իրականացման վայրը՝ Արժվան համայնք

Օբյեկտի անվանումը՝ ՀՀ Կոտայքի մարզի Արասնուսի բազալտների հանքավայրի Արմենիոս-2 տեղամաս

Հ Ա Շ Վ Ա Ր Կ

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԺԵՔԻ

_____ 20 թ.

Հ/հ	Հիմնավորում	Աշխատանքների և ծախսերի անվանումը	Չափման միավորը	Ծավալը, մ ²	Արժեքը, դրամ	
					Միավորի	Ընդհանուր
1	2	3	4	5	6	7
1.	1	Աշխատավարձ	դրամ	40		10515
2.	2	Նյութեր	դրամ			4000
3.	3	Տրանսպորտային ծախսեր	դրամ			12000
4.	4	Մեքենա, պարարտանյութեր	դրամ			3200
5.	5	Անուղղակի ծախսեր, 5,3%	դրամ			1575
6.	6	Շահույթ, 10%	դրամ			3128
7.	7	ԱԱՀ, 20%				6884
Ընդամենը						41302

Ընդերքօգտագործողի (նախագծող/նախագծային ինստիտուտ) պատասխանատու ներկայացուցիչը



(ազգանունը, անունը, հայրանունը)

(պաշտոնը, ստորագրությունը)

Բուսական և կենդանական աշխարհ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բացասական ազդեցությունը տարածքի բուսական և կենդանական աշխարհի վրա գրեթե զրոյական է: Ինչպես արդեն ներկայացվել է («Բուսական և կենդանական աշխարհը» բաժին)՝ երևակման տարածքը խոտածածկ է, չկան անտառապատ տարածքներ: Երևակման և հարակից տարածքներում բուսականությունը ներկայացված է Գեղամա և Երևանյան ֆլորիստական շրջանների միջև ընկած սահմանային, միջին բարձրության լեռնային տափաստանային գոնայի տարածքներին բնորոշ բուսականության տեսակներով, որոնցում գերակշռում են հատիկավոր և հատիկատարազգի ներկայացուցիչները: Կենդանիների բներ, որջեր չեն դիտարկվել:

Բնության հատուկ պահպանվող տարածքների վրա ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում, քանի որ մոտակա հատուկ պահպանվող տարածքը՝ «Էրեբունի» պետական արգելոցը, գտնվում է հայցվող տարածքից ավելի քան 10կմ հեռավորության վրա :

Հայցվող տարածքում բնության հուշարձաններ հաշվառված չեն: Բնության մոտակա հուշարձանն է Ձորաղբյուրի բրածո ֆլորան, որը գտնվում է երևակման տարածքից մոտ 2.5կմ հեռավորության վրա: Այստեղ ևս ազդեցությունների դրսևորում չի նախատեսվում:

Աղտոտում ընդերքօգտագործման թափոններով

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ժամանակ Արամուսի բազալտների հանքավայրի Արմենիու-2 տեղամասի տարածքում փորձնական բացահանքի արդյունահանման ընթացքում առաջանալու է մակաբացման փուխր ապարների և բազալտների հողմահարման շերտի կազմով մակաբացման զանգված:

Համաձայն ՀՀ Բնապահպանության նախարարի 26.10.2006թ.-ի «Հայաստանի Հանրապետության տարածքում գոյացող արտադրության /այդ թվում՝ ընդերքօգտագործման/ և սպառման թափոնների ցանկը հաստատելու մասին» N342-Ն Որոշման՝ մակաբացման ապարները հանդիսանում են փխրուն մակաբացման ապարներ և դասակարգվում են 34000120 01 99 5 ծածկագրով:

Այս մակաբացման զանգվածը իներտ է, ոչ վտանգավոր, չի կարող ենթարկվել էական ֆիզիկական, քիմիական կամ կենսաբանական վերափոխումների:

Ընդերքօգտագործման թափոնների օբյեկտ չի ստեղծվելու, քանի որ.

- փորձնական բացահանքից հանված մակաբացման փուխր ապարների և հողմահարման շերտի զանգվածը, թարմ բազալտների հանույթից հետո, հետ է լցվելու բացահանքի տարածք, կատարվելու է հարթեցում, ամրացում և ռեկուլտիվացիա,
- մեքենաների սպասարկումը կատարվելու է հարակից բնակավայրերի մասնագիտացված կետերի տարածքում, որտեղ ապահովված են անհրաժեշտ պայմանները քսայուղերի, յուղերի, տարատեսակ նավթամթերքների անվտանգ պահման և գործածման համար :

Աշխատանքների ընթացքում առաջանալու է չտեսակավորված կենցաղային աղբ (օրական 10կգ-ից ոչ ավել), որը ներկայացված է ապակու, թղթի, կտորի, սննդի մնացորդներից և պոլիմերներից: Թափոնը հաշվառված է 91200400 01 00 4 ծածկագրով: Մինչև 10 օր տևողությամբ դաշտային աշխատանքների ընթացքում առաջացած կենցաղային աղբը Ընկերության աշխատակիցների կողմից ամեն օր աշխատանքային օրվա ավարտին կտեղափոխվի կից գործող Ընկերությանը պատկանող բացահանքի աղբարկղներ:

Սոցիալական ազդեցությունը և ռիսկերը

Նախատեսվող գործունեությունն այս փուլում էական ազդեցություն չի ունենա համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հետագայում՝ հնարավոր հանքարդյունահանման աշխատանքների իրականացման դեպքում, Ընկերությունը համայնքում լրացուցիչ սոցիալ-տնտեսական օժանդակության ծրագրերի կմասնակցի:

Աղմուկ և թրթռումներ

Ծրագրավորվող աշխատանքների անբարենպաստ ներգործություն ունեցող գործոններից մեկը կարող է լինել առաջացող աղմուկը: Համաձայն «ՀՀՇՆ22-04-2014 «Պաշտպանություն աղմուկից» շինարարական նորմեր»-ի՝ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով սենքեր, մշտական աշխատատեղերով կազմակերպությունների տարածքների համար ձայնի թույլատրելի համարժեք մակարդակը կազմում է 80դԲա, առավելագույնը՝ 95 դԲԱ: Նախնական հաշվարկներով աշխատանքների ժամանակ առավելագույնը առաջանալու է 60-65դԲԱ աղմուկ:

Բնակելի տարածքում աղմուկի մակարդակի նորման կազմում է 45 դԲԱ:

Աղմուկի մակարդակը աղմուկից պաշտպանող տարածքի հաշվարկային կետում որոշվում է՝

LAտար = LAէկվ - ΔLAհեռ - ΔLAէկր - ΔLAկանաչ

Որտեղ՝

ΔLAէկվ - աղմուկի աղբյուրի ձայնային բնութագիրը, LAէկվ=60դԲԱ

ΔLAհեռ - աղմուկի մակարդակի նվազումը հաշվարկային կետի և աղմուկի աղբյուրի միջև հեռավորությունից կախված

ΔLAհեռ 1000մ-ի վրա կազմում է 45դԲԱ

ΔLAէկր - աղմուկի մակարդակի նվազումը էկրանով:

ΔLAէկր = 14դԲԱ տեղամասի տարածքը տվյալ դեպքում ծառայում է որպես էկրան:

LAկանաչ - աղմուկի մակարդակի նվազումը կանաչ գոտիով, ΔLAկանաչ=0դԲԱ

Աղմուկի մակարդակը սանիտարա-պաշտպանիչ գոտու սահմանին կկազմի՝ LAտար = LAէկվ - LAտար = LAէկվ - ΔLAհեռ - ΔLAէկր - ΔLAկանաչ = 60 - 45 - 14 = 1դԲԱ

Հաշվի առնելով աշխատող մեխանիզմների տեսակները, աշխատանքների բնույթը, բնակավայրերից առկա նվազագույնը 1.0կմ հեռավորությունը, ինչպես նաև բոլոր տեխնիկական միջոցների միաժամանակ չաշխատելու հանգամանքը, աղմուկի մակարդակը չի առաջացնի գերնորմատիվային ազդեցություն:

Դաշտային աշխատանքների հետ կապված առաջանալու է տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող տեխնիկա-տրանսպորտային

միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115ηԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112ηԲԱ:

Ռելիեֆի լանջերի դեֆորմացիաներ

Տեղամասի տարածքն ունի մինչև 8-10° թեքության մեղմաթեք ռելիեֆ: Տեղամասի, ինչպես նաև հարակից տարածքներում սողանքային մարմիններ չեն արձանագրվել: Համաձայն ՃՄՀԳ «Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի» տեղամասին ամենամոտ սողանքային մարմինները (KOTA-138-0210, KOTA-138-0290) գտնվում են տեղամասի տարածքից համապատասխանաբար 2.8կմ և 3.3կմ հեռավորությունների վրա: Աշխատանքների ազդեցություն սողանքների վրա չի կարող լինել:

Ստորև բերվում է շրջակա միջավայրի բաղադրիչների վրա հնարավոր ազդեցության նախնական գնահատական մատրիցը.

Շրջակա միջավայրի բաղադրիչները	Գործողություններ	
	Բեռների, սարքավորումների և անձնակազմի տեղափոխում	Մակերեսային լեռնային փորվածքների անցում
Մթնոլորտային օդ	ցածր կարճատև	ցածր կարճատև
Ջրեր	-	-
Հողեր	ցածր կարճատև	ցածր կարճատև
Կենսաբազմազանություն	ցածր կարճատև	ցածր կարճատև
Պատմամշակութային հուշարձաններ	-	-

6.ԱՂՏՈՏՈՒՄՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

6.1.Նախատեսվող հիմնական միջոցառումները

Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.

- Վառելիքի հիմնական լիցքավորման և քսայուղերի փոխարինման աշխատանքները կատարվելու են հարակից բնակավայրերում՝ համապատասխան ծառայություն մատուցող կայաններում:
- Աշխատանքներում ներգրավել միայն արտաթորվող թունավոր նյութերի ֆիլտրերով համալրված սարքավորումներ և մեքենաներ:
- Դաշտային աշխատանքները տևելու են մինչև 10 օր և կատարվելու են անձրևային օրերին, ուստի փոշենստեցման անհրաժեշտություն չի նախատեսվում :
- Կարճաժամկետ աշխատանքներում ներգրավված աշխատակիցների խմելու ջուրը կգնվի մոտակա որևէ գյուղի որևէ խանութից:
- Աշխատակիցների կենցաղային պայմանների ապահովման նպատակով տարածքում անվավոր վագոն-տնակի տեղադրում, որը կօգտագործվի որպես հանդերձարան և հանգստի սենյակ : Ջրցողարանի տեղադրում չի նախատեսվում՝ հաշվի առնելով ծրագրավորվող աշխատանքների փոքր ծավալները և կարճ տևողությունը :
- Կենցաղային աղբի հավաքում հատուկ անթափանց տարողություններում, 50լ տարողությամբ պոլիէթիլենային պարկերում, որը կտեղափոխվի Ընկերությանը պատկանող կից գործող բացահանքի աղբարկղեր:

- Օգտագործվող տեխնիկական միջոցների շարժիչների կարգավորում՝ աղմուկի նվազեցման, շրջանի կենդանական աշխարհի վրա բացասական ազդեցության բացառման նպատակով:
- Փորձնական բացահանքից հանված մակաբացման ապարների հետլցնում, տարածքի հարթեցում, ինչը հանդիսանում է երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների բաղկացուցիչ մաս:
- Աշխատանքների ժամանակ աղմուկի և թրթռումների վերահսկողություն : Համաձայն գործող նորմատիվ փաստաթղթերի, արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերով տարածքներում աղմուկի (ձայնի) առավելագույն մակարդակը չպետք է գերազանցի 95 դԲԱ, իսկ արտադրական կազմակերպությունների մշտական աշխատատեղերում ձայնի մակարդակը չպետք է գերազանցի 80 դԲԱ: Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների տեխնոլոգիական գործընթացների հետ կապված առաջանալու է առաջին կարգի տրանսպորտային թրթռում (վիբրացիա), որը կապված է տեղաշարժվող ինքնագնաց և կցորդային մեքենաների, տրանսպորտային միջոցների աշխատանքի հետ: Թրթռումների սահմանային թույլատրելի մակարդակը Z առանցքով չպետք է գերազանցի 115դԲԱ, իսկ X-Y առանցքներով՝ 112դԲԱ:
- ՀՀ կառավարության 31.07.2014թ.-ի թիվ 781-Ն որոշմամբ սահմանված դեպքերում՝ ըստ կիրառելիության, բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության միջոցառումների իրականացում:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ներկայացնելիս ընկերության կողմից գործունեության գնահատման հաշվետվության մեջ ներառվում և հետագայում իրականացվում են հողերում առկա օբյեկտների պահպանությանն ուղղված հետևյալ միջոցառումները՝

1) վայրի բուսատեսակների և դրանց պոպուլյացիաների վիճակի ուսումնասիրության (տեսակային կազմ, տարածվածություն, քանակ) իրականացում, որի տվյալները սահմանված կարգով տրամադրվում են բուսական աշխարհի պահպանության, պաշտպանության, օգտագործման և վերարտադրության բնագավառում լիազորված պետական մարմնին.

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ արգելված թունաքիմիկատների օգտագործման կանխարգելում:

Տեղամասում Հայաստանի Հանրապետության բույսերի Կարմիր գրքում (այսուհետ՝ կարմիր գիրք) գրանցված տվյալ բուսական տեսակի նոր պոպուլյացիաների հայտնաբերման դեպքում դրանց պահպանության նպատակով նախատեսվում է՝

1) առանձնացնել օգտագործման նպատակով տրամադրված տարածքում պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով.

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը.

3) սույն կետի 1-ին և 2-րդ ենթակետերում նշված միջոցառումների իրականացման անհնարինության դեպքում կարմիր գրքում, որպես տվյալ բույսի աճելավայր չգրանցված տարածքներից, բույսերի բնական վերարտադրության նպատակով տեղափոխում են տնտեսական գործունեության արդյունքում ոչնչացման սպառնալիքի տակ գտնվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

– Երևակման տարածքում Հայաստանի Հանրապետության բույսերի կարմիր գրքում գրանցված տեսակների հայտնաբերման դեպքում ձեռնարկել միջոցառումներ դրանց պահպանության համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, համաձայնեցնելով դրանք պետական կառավարման լիազոր մարմնի հետ:

- Երևակման տարածքում Հայաստանի Հանրապետության Կարմիր գրքում գրանցված կենդանիների հայտնաբերման դեպքում, ընկերությունը պարտավոր է միջոցներ ձեռնարկել դրանց պահպանության համար, բացառելով տեսակների թվաքանակի կրճատումը և դրանց ապրելավայրերի վատթարացումը: Միջոցառումները պետք է համաձայնեցվեն պետական կառավարման լիազոր մարմնի հետ:
- Պատահական գտածոների ընթացակարգի կիրառում՝ հետևյալ միջոցառումների իրականացման միջոցով.
 - ✓ համապատասխան անձնակազմի և պայմանագրով աշխատողների ուսուցում պատահական հնագիտական գտածոների ճանաչման, դրանց հետ վարվելակերպի և արձագանքի ուղղությամբ;
 - ✓ գտածոների ուսումնասիրություն հրավիրված հնագետների կողմից, որպեսզի վերջիններս ուղղորդեն հնագիտական գտածոների ճանաչման և արձագանքման գործընթացը,
 - ✓ արձանագրությունների կազմում պատահական գտածոներին արձագանքելու համար, ներառյալ աշխատանքի ժամանակավոր դադարեցումը գտածոների հայտնաբերման վայրում;
 - ✓ պետական մարմինների ծանուցում,
 - ✓ պատահական գտածոների գնահատման և պեղումների արագացված ընթացակարգերի կիրառում, ազդեցությունների սահմանափակման համար:

6.2. Սոցիալական ազդեցություն

Աշխատանքները նախատեսվում է կատարել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին, աշխատանքների անվտանգության նորմատիվային փոստաթղթերին և այլ նորմատիվ ակտերին համապատասխան և ապահովեն բոլոր տեսակի աշխատանքների անվտանգ կատարումը:

Աշխատակազմը պետք է ունենա խմելու որակյալ ջրի և զուգարանի հասանելիություն, սնունդ ընդունելու և հանգստանալու համար անհրաժեշտ պայմաններ: Աշխատատեղերում, հասանելի վայրում, պետք է լինեն առաջին օգնության բժշկական արկղիկներ և հակահրդեհային միջոցներ: Աշխատակազմը պետք է ապահովված լինի համազգեստով և անվտանգության միջոցներով:

Անվտանգության նոր սարքավորումների օգտագործումը պետք է ուսուցանվի, վերահսկվի և պարտադրվի: Աշխատանքի անվտանգության պահպանման համակարգը կնախատեսի պարբերական հրահանգավորում, ուսուցում և գիտելիքների ստուգում:

Ֆիզիկական ազդեցությունները /օրինակ՝ աղմուկը/ կանխելու նպատակով տեխնիկա-տրանսպորտային միջոցները պետք է համարված լինեն համապատասխան սարքին իլացուցիչներով: Սպասարկող անձնակազմի ընտրության ժամանակ առաջնահերթությունը տրվում է տեղի բնակչությանը:

Նախատեսվող գործունեությունն այս փուլում էական ազդեցություն չի ունենա համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի վրա: Հետագայում՝ հնարավոր հանքարդյունահանման աշխատանքների իրականացման դեպքում, Ընկերությունը համայնքում լրացուցիչ սոցիալ-տնտեսական օժանդակության ծրագրերի կմասնակցի:

6.3. Արտակարգ իրավիճակների, անբարենպաստ պայմանների և վթարային իրավիճակների հետևանքով առաջացող հնարավոր ազդեցությունների մեղմացմանն ուղղված միջոցառումների ծրագրեր

Տեղամասի տարածքում հնարավոր արտակարգ իրավիճակների նկարագիրը ներկայացվում է ստորև:

I. Արտածին երկրաբանական երևույթներով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Արամուսի բազալտների Արմենիուս-2 տեղամասի հաստվածքը ծագումնաբանորեն հարում է Կոտայքի սարավանդի վերին պլիոցենի լավային ծածկոցին, տեղակայված է վերջինիս արևելյան հատվածում: Տարածքի մակերևույթը հարթ է, մեղմաթեք, թեքության անկյունը չի գերազանցում 8-10°:

Համաձայն Հայաստանում սողանքների տեխնիկական տեղեկագրի (Միջազգային համագործակցության Ճապոնական գործակալություն, ՀՀ քաղաքաշինության նախարարություն, 2005) տեղամասում և դրա հարակից շրջանում սողանքային երևույթներ չեն արձանագրվել: Հետևաբար, սողանքային երևույթների հետ կապված արտակարգ դրություններ չեն լինելու:

II. Երկրաշարժով պայմանավորված արտակարգ իրավիճակներ

Ըստ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2020 թվականի դեկտեմբերի 28-ի «Երկրաշարժադիմացկուն շինարարություն. նախագծման նորմեր» N 102-Ն հրամանի՝ հայցվող տարածքը գտնվում է 2-րդ սեյսմիկ գոտում, որտեղ գրունտի հորիզոնական արագացման մեծությունը կազմում է 400 սմ/վ² կամ 0.4g:

Երկրաշարժի հետ կապված արտակարգ իրավիճակներում արագ արձագանքելու նապատակով նախատեսվում է տեղամասում աշխատող անձնակազմի համար կազմակերպել իրազեկման դասընթացներ և ներկայացնել գործողությունների համառոտ ծրագիրը: Երկրաշարժի դեպքում՝ ցնցումները զգալու ժամանակ հանքում աշխատող անձնակազմը պարտավոր է.

- անջատել բոլոր գործող սարքավորումները, մեխանիզմներն ու մեքենաները,
- հեռանալ մեքենաների և մեխանիզմների տեղակայման վայրից,
- կանգնել բացօթյա տարածքում,
- կապ հաստատել կազմակերպության ղեկավարության հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- կապ հաստատել տարածքային կառավարման մարմինների հետ՝ իրազեկելով տարածքում գտնվող աշխատակիցների քանակի և ընդհանուր իրավիճակի վերաբերյալ,
- աշխատանքները սպասարկող մեքենաներով ապահովել աշխատակիցների տարհանումը,

III. Գարնանային վարարման հետ կապված արտակարգ իրավիճակներ

Տեղամասի տարածքում գետեր, մակերևութային ջրեր չկան, ուստի գանանային վարարումների հետ կապված արտակարգ իրավիճակներ չեն կարող լինել: Հորդառատ տեղումների շրջանում, ըստ անհրաժեշտության, երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ չեն կատարվելու, տեխնիկական միջոցները հեռացվելու են տեղամասից, ինչը թույլ է տալիս բացառել սելավների հետ կապված բոլոր խնդիրները:

IV. Հրդեհային անվտանգությունն ապահովելու համար աշխատակիցները տեղեկացվելու են տեխնոլոգիական պրոցեսներում օգտագործվող նյութերի հրդեհավտանգության վերաբերյալ: Նշանակվելու է հրդեհային անվտանգության համար պատասխանատու անձ, մշակվելու է հրդեհի դեպքում անձնակազմի

գործողությունների պլան: Տեղամասում՝ հատուկ հատկացված վայրում տեղադրվելու են հրդեհաշիջման սկզբնական միջոցներ՝ կրակմարիչներ, ավազով արկղ, քահ:

V. Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների (քամու արագացում, անհողմություն, անոմալ բարձր շոգ կամ ցուրտ, թանձր մառախուխ, ամպրոպ): Անբարենպաստ օդերևութաբանական պայմանների իհայտ գալու դեպքում կիրառվում են հետևյալ միջոցառումները (ըստ իրավիճակի).

- կրճատվում է աշխատանքի տևողությունը,
- կրճատվում է միաժամանակ աշխատող մեքենաների և մեխանիզմների քանակությունը,
- բեռնատար մեքենաները կահավորվում են հատուկ մառախուղի լույսերով :

Երևակման տարածքում աշխատանքների անվտանգ իրականացման նպատակով.

- աշխատանքի են թույլատրվում անձիք, որոնք ունեն հատուկ պատրաստվածություն և որակավորում,
- օգտագործել մեքենաներ և մեխանիզմներ, սարքավորումներ և նյութեր, որոնք համապատասխանում են անվտանգության պահանջներին և սանիտարական նորմերին,
- անցկացնել պլանային-զգուշացնող համալիր վերանորոգումներ, պրոֆիլակտիկ աշխատանքներ և այլ դիտարկումներ,
 - աշխատանքի ժամանակ պետք է պահպանվեն անվտանգության տեխնիկայի կանոնները:

Նախատեսվում է կատարել պլանային աշխատանքներ ուղղված արտադրական տրավմատիզմի նվազեցմանը, աշխատակիցների հետ անցկացնել հրահանգավորում անվտանգության տեխնիկայի գծով:

7.ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆ

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ընթացքում ընկերությունը իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. Մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ երկրաբանական ուսումնասիրության ընթացքում յուրաքանչյուր շաբաթը մեկ անգամ,
2. Տեղամասի մակերեսի հողերի դիտարկում՝ նավթամթերքներով աղտոտվածությունը բացառելու նպատակով, տարեկան մեկ անգամ,
3. Տեղամասում և հարակից տարածքում կենսաբազմազանության դիտարկում, տարեկան մեկ անգամ,
4. Աղմուկի մակարդակի վերահսկողություն, տարեկան մեկ անգամ :

Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման և աղտոտվածության ուսումնասիրության նպատակով վերցված նմուշների լաբորատոր հետազոտությունը նախատեսվում է իրականացնել հավատարմագրված, համապատասխան հավաստագրեր ունեցող լաբորատորիաներում:

Կենսաբազմազանության դիտարկումը կատարվելու է համապատասխան մասնագետների կողմից (բուսաբան, կենսաբան)՝ պայմանագրային հիմունքներով:

Ազդակիր համայնքների վրա ազդեցության մշտադիտարկում

Ընդհանրապես շրջակա միջավայրի վիճակի վատթարացումը ազդում է տարածքի բնակչության կենսամակարդակի վրա:

Ընդհանրապես, լայնընդգրկուն հանքարդյունաբերական նախագծերի իրականացման դեպքում, բնակչության առողջության հետ կապված առաջացող հիմնահարցեր կարող են դառնալ.

- Աղտոտման հետ կապված հիվանդությունները և մահացությունները:

- Ջրի որակի և կենցաղային, տնտեսական, գյուղատնտեսական և այլ կարիքների համար դրա մատչելիության գնահատականը :

- Բնակելի շրջաններում մթնոլորտային օդի որակի գնահատման արդյունքները:

- Մթնոլորտային օդի աղտոտման մշտական կամ հատվածային բարձր մակարդակի տվյալները:

Սովորաբար տեղի բնակչությունը շրջանցվում է նաև սոցիալական և մշակութային հարաբերություններում՝ չունենալով մեծ հնարավորություններ մասնակցելու պետության և ընկերության ներկայացուցիչների միջև ընթացող բանակցություններին: Այդ ամենը կարող է առաջացնել անվստահություն և լարվածություն: Ուստի նման անցանկալի երևույթներից զերծ մնալու համար անհրաժեշտ է ապահովել.

- Ամբողջ գործընթացի թափանցիկություն. տեղի բնակչությունը պետք է մասնակցի տեղական զարգացման ծրագրերում ֆինանսական միջոցների բաշխման վերաբերյալ որոշումների կայացման գործընթացներին, ինչպես նաև աուդիտի կամ այդ ներդրումների արդյունավետության գնահատմանը :

- Տեղեկատվության փոխանակում. տեղի բնակչության, լեռնարդյունահանող ընկերության և իշխանության ներկայացուցիչները պետք է ստեղծեն տեղեկատվության փոխանակման ընթացակարգեր/ռազմավարություններ՝ որոշումների ընդունման ամենավաղ փուլերից սկսած և նախագծի իրագործման բոլոր փուլերում :

«Ընդերքօգտագործման հետևանքով բնապահպանական կորուստների նվազեցման, անվերադարձ ազդեցության կանխարգելման նպատակով պլանավորվող մշտադիտարկումների իրականացման պահանջների, ինչպես նաև արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ներկայացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 22.02.2018թ.-ի N191-Ն որոշման համաձայն ներկայացվում է մշտադիտարկումների աղյուսակը:


ՄՇՏԱՂԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մշտաղիտարկումների օբյեկտը	Մշտաղիտարկումների վայրը	Ցուցանիշը	Մշտաղիտարկումների տեսակը	Նվազագույն հաճախականությունը
Մթնոլորտային օդ	Փորձնական բացահանքի տարածք, ճանապարհներ	- հանքափոշի, այդ թվում՝ ծանր մետաղներ և կախյալ մասնիկներ (PM10 և PM2.5), ածխածնի օքսիդ, ածխաջրածիններ, ազոտի օքսիդներ, մուր, ծծմբային անհիդրիդ, բենզ(ա)պիրեն, մանգանի օքսիդներ, ֆտորիդներ, երկաթի օքսիդներ, ֆտորաջրածին	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	շաբաթական մեկ անգամ՝ 24 ժամ տևողությամբ
Հողային ծածկույթ	Ուսումնասիրության հայցվող տարածք	- հողերի քիմիական կազմը (pH, կատիոնափոխանակման հատկությունները, էլեկտրահաղորդականության հատկանիշներ, մետաղների պարունակությունը՝ Fe, Ba, Mn, Zn, Sr, B, Cu, Mo, Cr, Co, Hg, As, Pb, Ni, V, Sb, Se), - հողերի կազմաբանությունը՝ կավի պարունակությունը, բաշխումն ըստ մասնիկների չափերի, ջրակլանումը, ծակոտկենությունը, - հումուսի պարունակությունը, - հողերում նավթամթերքների պարունակությունը	նմուշառում, նմուշի լաբորատոր հետազոտություն, չափումներ ավտոմատ չափման սարքերով	- տարեկան մեկ անգամ - ամսական մեկ անգամ
Աղմուկի մակարդակի վերահսկողություն	Ուսումնասիրության հայցվող տարածք		չափումներ չափման սարքերով	տարեկան մեկ անգամ
Վայրի բնություն, կենսամիջավայր, կարմիր գրքում ընդգրկված, էպիտիկ տեսակներ	Ուսումնասիրության հայցվող տարածք և հարակից շրջան	տարածքին բնորոշ վայրի բնության ներկայացուցիչների քանակ, աճելավայրերի և ապրելավայրերի տարածք, պոպուլյացիայի փոփոխություն	հաշվառում, նկարագրություն, քարտեզագրում	տարեկան մեկ անգամ

Մշտաղիտարկումների իրականացման նպատակով ընկերությունը նախատեսում է տարեկան հատկացնել 300 000 դրամ:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության աղտոտման կանխարգելման մշտաղիտարկման կետերի նախնական տեղադիրքը ներկայացված է ստորև նկարում:

ՄՇՏԱԴԻՏԱՐԿԱՄԱՆ ԿԵՏԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ԲԱՐՏԵԶ



Պ Ա Յ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ն Շ Ա Ն Ն Ե Ր

Երկրաբանահետախուզական աշխատանքների տարածք

Նկար 13.

8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ընկերության պարտավորվել է երկրաբանական ուսումնասիրությունների իրականացման ընթացքում խստորեն պահպանելու ՀՀ առողջապահության նախարարի 2012թ. սեպտեմբերի 19-ի՝ «Կազմակերպություններում աշխատողների սանիտարակենցաղային սենքերի» N2.2.8-003-12 սանտարական կանոնները և նորմերը հաստատելու մասին» թիվ 15-Ա հրամանով հաստատված Սանիտարական կանոններն ու նորմերը:

Ստորև՝ աղյուսակում, ներկայացվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության և դրա մեղմման միջոցառումների համառոտ նկարագրությունը, որի իրականացման պատասխանատուն է հանդիսանում «Ա.Ա.Բ. Պրոեկտ» ՍՊԸ տնօրենը:

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղմման միջոցառում	Մեղմման հայտանիշ
1. Աշխատանքի անվտանգություն	Վնասվածքներ և պատահարներ աշխատանքների կատարման վայրում	<ul style="list-style-type: none"> - Աշխատողներն ապահովվում են Անհատական Պաշտպանության Միջոցներով (ԱՊՄ) - Սարքավորումների շահագործվում են ԱՊՄ օգտագործման կանոնների խիստ պահպանում - Աշխատակիցները իրազեկվում են պաշտպանության հրահանգների վերաբերյալ 	<ul style="list-style-type: none"> - Չնման ընթացքում սարքավորումների շահագործման և օգտագործման հրահանգների խախտումներ չեն արձանագրվել
2. Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ	Օդի աղտոտում արտանետումներով	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրման արգելում - Տեխնիկան և մեքենաները պահել պատշաճ տեխնիկական վիճակում՝ բացառելով ավելորդ արտանետումները 	<ul style="list-style-type: none"> - Չնման ընթացքում աշխատանքների կատարման վայրում նյութերի/ թափոնների բաց այրում չի հայտնաբերվել - Չնման ընթացքում տեխնիկան և մեքենաները շահագործվել են առանց հավելյալ արտանետումների - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
	Աղմուկ	<ul style="list-style-type: none"> - Մահմանված աշխատանքային ժամերի պահպանում - Աղմկախիլացուցիչների տեղադրում շարժական կայանների և սարքավորումների վրա - Սարքավորումների կանխարգելիչ վերանորոգում աղմուկը նվազեցնելու նպատակով - Ոչ անհրաժեշտ և չօգտագործվող սարքավորումների անջատում 	<ul style="list-style-type: none"> - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Չնման ընթացքում սարքավորումները եղել են բավարար տեխնիկական վիճակում - Չնման ընթացքում միացված չօգտագործվող սարքավորումներ չեն

Գործողություն	Հնարավոր ազդեցություն	Մեղման միջոցառում	Մեղման հայտանիշ
			հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել
	Բուսական աշխարհի Կենդանական աշխարհի	<ul style="list-style-type: none"> - Հողերի ռեկուլտիվացիա, - Աղմուկի սահմանված մակարդակի վերահսկում - Բացառել տեխնիկատրանսպորտային միջոցների երթևեկությունը ճանապարհներից ու արտադրական տարածքներից դուրս: 	<ul style="list-style-type: none"> - Վերականգնված բուսածածկ - Աշխատանքային ժամերից հետո ոչ մի աշխատող սարքավորում չի հայտնաբերվել - Մոտակայքի բնակիչներից բողոքներ չեն եղել

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Հիդրոոդերևութաբանության և մոնիթորինգի կենտրոն» ՊՈԱԿ -ի տվյալներ
2. СН 245 – 71. Санитарные нормы проектирования промышленных предприятий
3. СНиП 1.02.01-85 Инструкция о составе, порядке разработки, согласования и утверждения проектно-сметной документации на строительство предприятий, зданий и сооружений.
4. Մթնլուրտային արտանետումների գույքագրման ձեռնարկ: ЕМЕР/ЕЕА
5. Инструкция о порядке рассмотрения, согласования и экспертизы воздухоохраных мероприятий и о выдаче разрешений на выброс загрязняющих веществ в атмосферу по проектным решениям. ОНД – 84 – Н
6. СН 245 – 71 Санитарные нормы проектирования промышленных предприятий
7. СНиП 2.04.01-85. Внутренний водопровод и канализация зданий
8. ՀՀՇՆ II-7.01-2011 «Շինարարական կլիմայաբանությունն»
9. Долгосрочное прогнозирование уровня и возможных отрицательных последствий загрязнения атмосферы, Обнинск 1984г.
10. Сборник методик по расчету выбросов в атмосферу загрязняющих веществ различными производствами. Госкомгидромет, Ленинград, 1986
11. Пособие по составлению раздела проекта “Охрана окружающей природной среды ” к СНиП 1.02.01-85. Госстрой СССР, ЦНИИПРОЕКТ, Москва, 1989г.
12. РД 52.04.186-89. Руководство по контролю загрязнения атмосферы. ГК СССР по гидрометеорологии
13. Քո շրջապատի թփերը, 1984, Լ.Վ. Հարությունյան
14. Дубравы Армении, 1957, Л.Б. Махатадзе,
15. Հայաստանի Ազգային Ատլաս: Երևան, 2007
16. Հայաստանի բնաշխարհ, 2006
17. Հայաստանում անապատացման դեմ պայքարի գործողությունների ազգային ծրագիր, 2002
18. Հայաստանի կենսաբազմազանության առաջին ազգային զեկույց, 1999
19. ՀՀ բույսերի կարմիր գիրք, 2009
20. ՀՀ կենդանիների կարմիր գիրք, 2009
21. ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք <http://kotayk.mtad.am>
22. Արբվյանի համայնքապետարանի պաշտոնական կայք`
<https://www.abovyan.am>
23. ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայք` <https://armstat.am/am>
24. “Цветушие уголки биоразнообразия”, FAO,
25. <http://www.fao.org/3/i1687r/i1687r08.pdf>